



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	2
Ո՞ր Կ'ԵՐԹԱՅ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷԼ*.....	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ	5
ԱՐԱ ՔԷՇԻՇԵԱՆ. «ՔԵՍԱՊԸ ԻՒՐԱՅԱՏՈՒԿ Է ԻՐ ԲԱՐԲԱՌՈՎ ԵՒ ՄՇԱԿՈՅԹՈՎ».....	5
ԿԻՊՐԱՀԱՅ	8
ԱՐՅԱԽԸ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒ ԵՒ ՏԱԳՆԱՊՆԵՐՈՒ ԸՆԴՄԷՋԷՆ	8
ՇԱՏ ՇՈՒՏՈՎ՝	11
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ	12
ՎԻԺԵՅՆԵԼ ՈՐՈԳԱՅԹՆԵՐԸ ՈՒ ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.....	12
ԿՈՒՌ ՀԱՄԱԽՄԲՈՒԱԾՈՒԹԵԱՄԲ ՈՒ ՍԹԱՓ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՄԲ.....	12
ԿԸ ՄՊԱՍԵՆՔ ԼՈՒՍԱԻՈՐ ՎԱՂՈՒԱՆ	15
ՄՐՏԻ ԽՕՍՔ՝ ՍԷՄ ՍԻՄՈՆԵԱՆԻ ՀԲԸՄ-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒՆ ԱՌԻԹՈՎ	17
ԱԶՂՊԷՅՃԱՆԻ ԻՐԱՆԱՄԷՏ «ՀԻՒՄԷՅՆԻՅՈՒՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ.....	19
ԱԻ-Ի ԴԱՐՈՒՆ՝ ԹՈՒԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ ԸՆԴԴԷՄ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԴԱՐՈՒՆ.....	23
ՏԵՍԱԿԷՏ	26
ՊԱՀԱՆՋԱՏԷՐՆ ԵՄ ՊԱՊԵՐԻՍ ԵՐԿՐԻ	26
ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ Ո՞ՐՆ Է «ԵՐԿԻՐ ԴՐԱԽՏԱՎԱՅՐԸ».....	28
ՀԱՅԱՍՏԱՆԸ, ԱՍԵՐԻԿԱՆ ԹԷ՞՞ ԾՆՆԴԱՎԱՅՐԸ	28
ԽՆԴՐԱՅԱՐՈՅՑ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՍԸ ՀԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ.....	31
ԽԱՌՆԱՇՓՈԹ.....	32
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆ.....	34
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ	36
ՓՈՒՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ.....	36
ՄՐՏԻ ԽՕՍՔ ՍԷՄ ԵՈՒՍԷՅԵԱՆԻ.....	44
ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԵԱՆ	44
ՊԷՅՐՈՒԹԻ ՓՈՂՈՑՆԵՐԸ.....	47
ՀԱՅԵՐԷՆ ՉԵՄ ԿՐՆԱՐ ԽՕՍԻԼ.....	50
ԵՍ/ ԱՅՍ ՔԱՂԱՔԸ.....	51
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ	53

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ո՞ՒՐ Կ'ԵՐԹԱՅ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ*



Ճշմարիտ է ըսուած. «Լեզուն ազգի մը հոգին է. կենդանի է այդ հոգին, կենդանի է եւ ազգը. կենսունակ է առաջինը, ուրեմն կենսունակ է եւ երկրորդը»:

Այո, որովհետեւ լեզուն միայն հաղորդակցութեան միջոց չէ, այլև լեզուամտածողութիւն է, պատմութիւն ու մշակոյթ է, ազգային նկարագիր ու հոգեկերտուածք է, շունչ ու ոգի է:

Յետեղեռնեան հայ սփիւռքը՝ հայրենահանուած ու արմատախիլ, եթէ կրցաւ դար մը ամբողջ ու դեռ աւելի գոյատեւել որպէս հայ հաւաքականութիւն, ասիկա վստահաբար կը պարտի ան, գերազանցօրէն, իր հայ դպրոցներու ցանցին, ուր հայոց լեզուն, հայ գիրն ու գրականութիւնը, անոնցմով ստեղծուած հայեցի ոգին ու շունչը փոխանցուեցան իրերայաջորդ սերունդներուն, օղակ առ օղակ շաղկապելով զանոնք իրարու, որպէս մէկ ժողովուրդի մը զաւակները, մէկ մշակոյթի ու մէկ պատմութեան ժառանգորդներն ու կրողները:

Ներկայիս, ցաւով պիտի արձանագրել, որ որքան կ'աղաւաղուի ու կ'աղճատուի արեւմտահայերէնը՝ օտար բառերու անխնայ ներխուժումովը մեր լեզուին՝ քիչ մը ամէն տեղ, մամուլի էջերուն մէջ, հայ մարդկանց շուրթերուն...: Կ'աղաւաղուի ու կ'աղճատուի ան լատինատառ գրութիւններով՝ համացանցի տարածքին վրայ, եթերէն եւ քիչ մը ամենուր հնչող կոպիտ սխալախօսութեամբ... Մենք կարծես դադրած ենք, ըստ էութեան, արժանի գուրգուրանք տածելէ հայոց լեզուին, զայն ուսուցանող հայ դպրոցին, մասնաւորաբար Սփիւռքի օտար ասիւններուն վրայ, ուր յետ-Եղեռնեան սերունդը՝ անչափելի զոհողութիւններու ու զրկանքներու գնով, բացաւ հայ դպրոցներու ցանցը՝ բոլոր հայազաղութներու մէջ ալ, միշտ հաւատալով հայոց լեզուի վճռորոշ դերին՝ հայը հայ պահելու սրբազան առաքելութեան մէջ: Տակաւ կ'աղքատանայ, կը իւեղճանայ մեր լեզուն, անոր բառապաշարը, կ'այլասերի անոր շարահիւսութիւնը, անոր հնչերանգը կամ արտասանութիւնը... Եւ դպրոց-դպրոցի ետեւէ կը փակուին թերեւ ձեռքով... Վերջին երկու տասնամեակներուն, փակուած են 250-է աւելի հայ դպրոցներ, որոնց մէջ՝ գիշերօթիկ մեր մեծագոյն կրթական հաստատութիւնը՝ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը: «Կարելորը հայ զգալն է», ըսողներ կան կարելոր կազմակերպութեանց եւ միութեանց ղեկավարի դեր ստանձնած անձանց կողմէ, որոնց համար հայ դպրոց պահելը տնտեսական գործունէութիւն է կարծէք,



«պիզնես»ի կամ գրպանային տրամաբանութեամբ գործող վայր է: Զուգահեռաբար, որքան պակասած է հայ գիրքի, հայ մամուլի ընթերցանութիւնը մեր մատղաշ սերունդին մօտ յատկապէս...Եւ այսպէս կը նահանջէ մեր լեզուն, կը նահանջեն հայ հոգին եւ հայեցի ինքնութիւնը.... Մեղա՛յ, մեղա՛յ Արարատին, պիտի ըսէր մեծ գրող Շահան Շահնուր:

Արեւմտահայ տարագիր մեծ բանաստեղծ Վահան Թէքէեան՝ 1942-ին, մարգարէաշունչ ցաւատանջութեամբ կը գրէր. «Լեզուն որով գրեցի՝ երկրի երեսը քիչեր Կը կարդային զայն արդէն ու պակսեցա՛ն անոնք ալ...Հարիւր տարի ետք միայն,..լեզուն անուշ գոր խօսեր էին անուշ տղաքներ, գուցէ խօսող չունենայ...

Տակաւին հարիւր տարի չէ անցեր վերոնշեալ թուականէն, սակայն արեւմտահայերէնը գահավէժ ընթացքով տեղի կու տայ եւ արդէն դասուած է՝ անհետանալու վտանգին ենթակայ լեզուներու շարքին, UNESCO-ի իսկ վկայութեամբ: Հանգամանք մը՝ այս, որ մտորելու, հարցադրելու առիթ կու տայ տարբեր ուղղութիւններով...:

Արդարեւ, Հայոց Ցեղասպանութեան եւ Հայրենագրկումի ահռելի ոճրագործութեան հետեւանքը եղաւ ոչ միայն Արեւմտահայաստանի հայագրկումը, մարդկային եւ գոյքային անչափելի կորուստները, այլեւ ու յատկապէս՝ հարազատ մշակոյթի անհետացման սպառնալիքը, որուն հիմնական կորիզն է, անտարակոյս, լեզուն՝ արեւմտահայերէնը, լեզու մը հազարազանձ, գոր յոկեր ու մշակեր էին մեր մեծ գրողները, բանաստեղծներն ու հրապարակագիրները, երգի, թատրոնի եւ արուեստի գործիչները...: Կը խորհի՞նք երբեւէ որ լեզուի կորուստը հիմնական կորուստ է, որովհետեւ լեզուն մեր ազգային վաւերական ինքնութեան ամէնէն էական, առանցքային բաղադրիչն է: Կը հարցադրե՞նք երբեւէ, թէ ի՞նչ կը մնայ սփիւռքացած տարագիր մեր ժողովուրդէն, եթէ անկէ զեղչենք հայերէն լեզուն՝ արեւմտահայերէնը, հայ խօսքն ու գիրը, հայ երգն ու տաղը...: Առանց ազգային էութեան այս բաղադրիչներուն, կը մնայ վստահաբար հայկական անունով կամ ծագումով անդիմագիծ ամբոյս, լաւագոյն պարագային, կը մնան հայասերներ, հայամէտներ ու բարեսերներ, օղին մէջ հայ զգացողներ, ազգային անհետացման սպառնալիքին տակ:

Պատճառնե՞րը այս նահանջին: Կարելի է թուել անշուշտ մեր ժամանակներուն սպառողական հասարակութեան ստեղծած նիւթական արժէքներու գերակայութիւնը, գործնապաշտ եւ օգտապաշտ փիլիսոփայութիւնը եւ համաշխարհայնացման ամենակուլ յորձանքը, մեր օտարամոլութեան ախտը: Կարելի է թուել մեր կենսունակ, հայօրէն աշխոյժ հայագաղութներուն թուլացումն ու տկարացումը,՝ քաղաքական-քաղաքացիական տակնուվրայութիւններու հետեւանքով, ինչպիսիք էին մասնատրաբար Լիբանանի, Մուրիոյ հայագաղութները եւ ուրիշներ, որոնք հայկականութեան արիւնատար, կենսատու երակներն էին համայն սփիւռքին:

Ամէնէն ճակատագրականը սակայն ՀԱՅ ԴՊՐՈՑԻՆ նահանջն է, քանզի հայ դպրոցն է, որ սփիւռքի օտար ավերուն վրայ կոչուած է սորվեցնելու արեւմտահայերէնը, անով կերտելու Հայ ՍԵՐՈՒՆԴԸ եւ երաշխաւորելու ազգային հաւաքականութեան շարունակականութիւնը: Հայ դպրոցի նահանջով, Հայերէն լեզուի ուղղախօսութեան, ուղղագրութեան եւ ճիշդ շարադրութեան անկումը ահաւոր չափերու հասած է:



Հայ դպրոցի վերակենսաւորման ուղղութեամբ, անհրաժեշտ է, կը խորհիմ, կեանքի կոչել ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ, որ ճիշդ ուղիի վրայ կարենայ դնել արեւմտահայերէնի դասաւանդումը, անոր ուսուցման եղանակները, մեթոտաբանութիւնը, հայերէն դասագիրքերու ճիշդ ընտրութիւնը, լեզուական նիւթերը շատ աւելի հետաքրքրական, այժմեական եւ գրաւիչ դարձնելու միտումով, ինչպէս նաեւ որպէս ՎԵՐԱՀԱՅՈՂ ՀԵՂԻՆԱԿԱԻՈՐ ՄԱՐՄԻՆ: Ներկայիս չկայ բոլորին կողմէ ընդունուած արեւմտահայերէնի ՄԷԿ ԳՐԵԼԱԶԵԻ, ՄԷԿ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՄԷԿ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ, ՄԷԿ ՈՒՂՂԱԽՕՍՈՒԹԻՒՆ...

Զուգահեռաբար, որքան բաղձալի պիտի ըլլար կեանքի կոչել ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ մը, որ ֆինանսական աջակցութիւն ցոյց տար նիւթական դժուար եւ անելանելի վիճակին մէջ յայտնուած հայ դպրոցներուն:

Արեւմտահայերէնի ուսուցման արդիւնաւէտ միջոց կրնայ ըլլալ նաեւ անոր առցանց ուսուցումը, որուն փորձը կայ կը կարծեմ եւ տարածուելու յոյս ու հեռանկար կը ներշնչէ:

Իսկ Մայր հայրենիքը կրնայ վստահաբար բերել իր մեծագոյն ներդրումը ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ պահպանման ու զարգացման, հիմնելով ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆ լեզուի ուսուցման կեդրոն, ուր կրնան յաճախել սփիւռքահայութեան նոր սերունդի ներկայացուցիչներ եւ այլ փափաքողներ, լուծում տալով նաեւ արեւմտահայերէնի ուսուցման ուսուցիչներ պատրաստելու կարելոր խնդրին: Նմանապէս, ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ տարածման կրնայ սատարել ՀՀ Կրթական նախարարութիւնը եւ պատկան մարմինները, եթէ հայ գրականութեան դասապահերուն, կարելոր տեղ յատկացնեն արեւմտահայ գրականութեան՝ դասական եւ արդի նորագոյն ստեղծագործութեանց: Այս կարելոր քայլը որքան պիտի քաջալերէր նոր ստեղծագործողները, նոր թափ ու սլացք պիտի տար արեւմտահայերէնի ուժականացման: Նոր մթնոլորտ պիտի ստեղծէր:

Պիտի ուզէի խօսքիս վերջին հատուածը ներկայացնել դրական արձանագրութեամբ: Արդարեւ, Կիպրոսի մէջ, ներկայիս երեք քաղաքներու մէջ գործող ՆԱՐԵԿ ՀԱՅԿԱԿԱՆ վարժարանները՝ Նիկոսիոյ, Լառնագայի եւ Լիմասոլի մէջ, ամբողջովին կը ֆինանսաւորուին Կիպրոսի կառավարութեան կողմէ, առանց որեւէ կաշկանդումի ենթարկելու հայերէն նիւթերու ընտրութիւնը կամ անոնց դասաւանդումը: Սա կարելի է համարել ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀՈՒՄ մը կիպրահայ համայնքին համար, ուր ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ պաշտօնապէս ճանչցուած է Կիպրոսի կառավարութեան կողմէ որպէս կրօնական համայնքի մը լեզուն, որ պէտք է պահպանուի եւ պաշտպանուի օրէնքի ոյժով: Սա է գլխաւոր պատճառը զուցէ որ կիպրահայ գաղութը կը մնայ ՀԱՅԱԽՕՍ: Եւ մենք՝ կիպրահայերս, խորապէս երախտապարտ ենք Կիպրոսի կառավարութեան իր այս հայասիրական բացառիկ վերաբերմունքին համար:

Հակառակ մեզի՝ կիպրահայերուս ընծայուած այս բացառիկ դիրութեան, լրագրական ասպարէզէս ներս, յաճախ դեմ յանդիման կու գամ տխուր իրականութեան մը: Շատ մը կիպրահայեր ինծի կ'ըսեն. «Պարզ գրէ, դժուար բառեր մի՛ գործածեր, որպէսզի կարենանք



հասկնալ...»...Բայց, յարգելիներս, ամէն միտք, ապրում, իր իւրայատուկ բառը, եզրոյթը ունի զայն արտայայտելու համար...Արդեօ՞ք հայոց մեր լեզուն՝ մեր ոսկեղենիկ Մեծասրանչը, պիտի վերածենք «հաց ու պանիր»ի լեզուի, կամ զայն աղճատենք օտարաբանութեամբ...ՄԻՐԵԼ ՀԱՅԵՐԷՆԸ պիտի նշանակէր նաեւ ՃԻՇԴ ԽՕՍԻԼ եւ ՃԻՇԴ ԳՐԵԼ, ընտրելով ՃԻՇԴ բառը...Հարուստ է մեր լեզուն, զարգանալու լայն կարելիութիւններով...ՉԱՂՔԱՏԱՑՆԵՆՔ ու ՉԱՂՃԱՏԵՆՔ զայն...Անիկա՝ իր զոյգ ճիւղերու՝ արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի պահպանումով եւ զարգացումով, մեր մեծագոյն հարստութիւնն է, առանց որուն նոյնիսկ հայրենիքը պիտի կորսնցնէր իր բուն իմաստն ու արժէքը, իր ազգային նկարագիրը, իր ազգային էութիւնը:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

**Այս գրութիւնը որպէս ԶԵԿՈՅՅ (տեսագրուած) ներկայացուած է՝ «ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՆ. ՄԱՐՏԱՀՐԱԻԷՐՆԵՐ ԵՒ ՀՆԱՐԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ» միջազգային գիտաժողովին, կազմակերպութեամբ Հայաստանի գիտութեանց ազգային ակադեմիային, Երեւանի պետական համալսարանին եւ Մանկավարժական համալսարանին համագործակցաբար՝ 7-8 նոյեմբեր 2024-ին, Ակադեմիոյ Լեզուի հիմնարկէն ներս, Երեւան:*

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

ԱՐԱ ՔԷՇԻՇԵԱՆ. «ՔԵՍԱՊԸ ԻՒՐԱՅԱՏՈՒԿ Է ԻՐ ԲԱՐԲԱՌՈՎ ԵՒ ՄՇԱԿՈՅԹՈՎ»



Հարցազրոյցը վարեցին՝
Դինա Գասպարեան
Աննա Սադպազարեան
Գեղարդ Գաթրճեան

«Գանձասար»-ի կազմակերպած երիտասարդ լրագրողներու վերապատրաստման եռօրեայ խորհրդաժողովը տեղի ունեցաւ Քեսապի մէջ, 6, 7 եւ 8 Հոկտեմբեր 2024-ին:



Խորհրդածողովի մասնակիցները ունեցան նաեւ գործնական աշխատանքներ, որոնցմէ մէկը ստորեւ տրուած հարցազրոյցն է, որ կը միտի լուսարձակի տակ առնել Քեսապի հայկական դիմագիծը: Մեր լրագրողներու հարցումներուն պատասխանեց քեսապահայ Արա Քէշիշեան:

«Գանձասար»-Մեր Քեսապ գտնուիլը առիթ համարեցինք ծանօթանալու անոր հայկական դիմագիծին, որոշ տեղեկութիւններ առնելու ձեզմէ այս իմաստով: Նախ Քեսապի մէջ ներկայիս գործող դպրոցներուն, եկեղեցիներուն եւ միութիւններուն մասին կ'ուզենք իմանալ:

Արա Քէշիշեան- Բարի եկած էք Քեսապ: Քեսապի մէջ պատմութեան տարբեր փուլերուն մեծ թիւով դպրոցներ գործած են: 2024-2025 տարեշրջանին կը գործեն երկու հայկական վարժարաններ՝ Հայ Աւետարանական Նահատակաց Նախակրթարանը եւ Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Երկրորդական վարժարանը: Քեսապի մէջ ունինք երեք համայնքներ՝ Հայ Կաթողիկէ, Հայ Աւետարանական եւ Հայ Առաքելական: Երեքն ալ ունին եկեղեցիներ:

Հայ Առաքելական համայնքին կը պատկանին, գործինակ Գարատուրանի Ս. Աստուածածին, Քեսապի եւ Էսկիւրանի Ս. Աստուածածին եկեղեցիները: Համայնքը թիւով ամէնէն մեծն է:

Քեսապի մէջ կը գործեն հետեւեալ միութիւնները՝ Համազգային, ՀՄԸՄ, ՀԲԸՄ, ՍԵՄ, ՍՊՍ եւ ՍՕԻս: Բոլորն ալ ներկայ պայմաններուն մէջ կը շարունակեն գործել ու մշակութային, մարզական, երիտասարդական թէ բարեսիրական իրենց աշխատանքով պահել Քեսապի հայկական կեանքը:

«Գ.»- Քեսապի մէջ ամէնէն յատկանշական ու աւանդական տօնը ո՞ր տօնն է:

Ա.Ք.- Քեսապի մէջ ազգային, եկեղեցական զանազան տօներ կը յիշատակուին: Ամենանշանաւորը Սուրբ Աստուածածնայ Վերափոխման տօնն է, որ երկար տարիներէ ի վեր կը համարուի ուխտի օր:

Այդ օրը Սուրբիոյ բոլոր տարածքներէն, նոյնիսկ Լիբանանէն մեծ թիւով ուխտաւորներ կը ժամանեն Քեսապ մասնակցելու տօնին: Կիրակի օր, սրբազան հօր հանդիսապետութեամբ պատարագ եւ խաղողօրհնէք տեղի կ'ունենայ: Խաղողօրհնէքէն ետք աւանդութիւն դարձած է ՀՄԸՄ-ի Սուրբիոյ բոլոր մասնաճիւղերու մասնակցութիւնը տարեկան տողանցքին՝ եկեղեցիէն մինչեւ Քեսապի Համալիրի հրապարակ, ուր սրբազան հայրը եւ ՀՄԸՄ-ի Շրջանային Վարչութիւնը իրենց խօսքը կ'ուղղեն ժողովուրդին:

Կիրակի յետմիջօրէին ժողովուրդը կը հաւաքուի Էսկիւրանի եկեղեցին, ուր տեղի կ'ունենայ ուխտաւորներու կողմէ բերուած ոչխարներու օրհնութիւնը, զենումը եւ մինչեւ առաւօտ կը պատրաստուի Քեսապի աւանդական, համեղ հարիսան: Ժողովուրդը սեղոյ գումնայով եւ հայկական պարերով կը լուսցնէ այդ գիշերը: Նոյն օրերուն տեղի կ'ունենան փառաստօներ, որոնց իրենց մասնակցութիւնը կը բերեն Հալէպի Համազգայինի պարախումբը, թատերախումբը, Քեսապի պարախումբին եւ երգչախումբին ընկերակցութեամբ: Իսկ Սուրբահայ Օգնութեան Խաչի Ձեռարուեստի Յանձնախումբը կը պատրաստէ իր տարեկան ցուցահանդէսը, ուր կը ներկայացուին նաեւ Քեսապի ճաշատեսակներ:

Երկուշաբթի առաւօտեան, սրբազան հօր նախագահութեամբ Պատարագ կը մատուցուի Էսկիւրանի Ս.Աստուածածնայ ուխտավայրը, որմէ ետք սրբազան հայրը կ'օրհնէ հարիսան, որպէսզի բաժնուի հաւատացեալներուն:

Յատկանշական է յիշել նաեւ որ սուրբահայ բոլոր երիտասարդական եւ պատանեկան միութիւնները՝ ՀՄԸՄ, ՀԵԸ, ՍԵՄ եւ այլն, իրենց տարեկան բանակումները կը կազմակերպեն այդ օրերուն Քեսապի մէջ: Ուստի Օգոստոս ամսուն Քեսապի հայկական դիմագիծը կը շեշտուի նաեւ նման բանակումներով եւ արարողութիւններով:

«Գ.»-Հետաքրքրական է իմանալ նաեւ Քեսապի յատուկ ուտեստեղէնի մասին:



Ա.Ք.- Քեսապի նշանաւոր ուտելիքներէն է՝ բկեղը (ձիթախիտով կարկանդակ): Աւանդութիւն դարձած է, որ թաղի տիկիները տօնական օրերու նախօրեակին հաւաքուին եւ միասնաբար պատրաստեն այս համեղ կարկանդակը, որ տօնական օրերուն անպակաս կ'ըլլայ սեղաններէն:

Քեսապի ռուպը (մասարան) եւս յատուկ արարողութեամբ կը պատրաստուի: Մինչեւ օրս Ամերիկայի, Հայաստանի եւ այլ երկիրներու մէջ ապրող քեսապցիներն անգամ պահած են այդ սովորութիւնը: Քեսապցիներ դրացիներով, բարեկամներով կը հաւաքուին, պարով, երգով, խորոված եփելով, շատ ճոխ մթնոլորտի մը մէջ նախ խաղողը կը ճզմեն պզտիկ աւազանի մը մէջ, ետքը ելած հիւրին վրայ յատուկ ճերմակ հող մը կը սրսկեն, ետքը եռացնելով կը գտեն խաղողին ջուրը ու կը պատրաստեն ռուպը: Ապա յատուկ շերեփով մը, որ գրնէպ կ'անուանենք, կը վերցնեն պատրաստուած ռուպէն բաժին մը եւ դարձեալ կը պարպեն աւազանին մէջ, որպէսզի փրփուրի նման պղպջակներ կը յառաջանան: Պատրաստողը փրփո՛ւր, փրփո՛ւր կը կանչէ, իսկ ժողովուրդը դափնիի տերեւներով կու գայ փրփուրը համտեսելու:

«Գ.»- Քեսապի բարբառը ցարդ օգտագործողներ կը տեսնենք գիւղին մէջ, որքան ուրախալի է լսել զայն ու փորձել հասկնալ իւրաքանչիւր բառ: Ինչպէ՛ս կը փոխանցուի ան սերունդէ սերունդ:

Ա.Ք.- Քեսապի բարբառին քեսպնոք կ'ըսենք, այսինքն՝ յատուկ քեսապցիներուն: Ժամանակին նոյնիսկ Անտիոքի մէջ նոյն բարբառը կը գործածուէր, Մուսա Լեռան մէջ եւս շատ քիչ տարբերութեամբ գրեթէ նոյն բարբառը կ'օգտագործուէր: Քեսապի բարբառը ոչ միայն կը գործածուի Քեսապէն ներս, այլեւ Քեսապէն դուրս: Քեսապէն դուրս գտնուող քեսապցիներ երբ հաւաքուին, կը խօսին այս բարբառով, նոյնն ալ մենք կ'ընենք, ու ան սերունդէ սերունդ կը փոխանցուի: Թէեւ պէտք է ըսել որ երիտասարդներու գաղթին բերումով բարբառի փոխանցումն ալ դժուար կը դառնայ տարուէ տարի, ինչպէս շատ մը աւանդութիւններու:

«Գ.»- Գրականութեան եւ եկեղեցական ասպարէզներուն մէջ Քեսապ ակնառու դէմքեր տուած է հայ կեանքին: Կը յիշէ՞ք քանի մը օրինակ:

Ա.Ք.- Դժուար է յիշել բոլորը: Քեսապ շատ նշանաւոր եղած է իր կղերականներով, անոնցմէ գլխաւորը Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսն է եւ եպիսկոպոսներ, ինչպէս՝ Գլնճեան, Աշրգեան: Կաթողիկէ եւ աւետարանական համայնքներուն մէջ ունեցած ենք վարդապետներ, պատուելիներ, անոնցմէ կը յիշեմ վերապատուելի Սարամազեանը, որ եղած է ընդհանուր նախագահը աւետարանական համայնքին: Իսկ կաթողիկէ համայնքէն՝ հայր Վարդան Քէշիշեան, Մեսրոպ Ճիւլեան, որ հոգեւորական ըլլալուն կողքին եղած է նշանաւոր գրող: Քեսապ հարուստ է իր գրողներով, բանաստեղծներով, ինչպէս՝ բանասէր դոկտ. Յակոբ Չոլաքեան, որ ունի Քեսապի մասին ուսումնասիրական ծաւալուն երկու հատորներ «Քեսապ» խորագրով, առաջինը տպուած 1995-ին, երկրորդը՝ 1998-ին, որոնցմէ կրնաք օգտուիլ մանրամասն տեղեկութիւններ ստանալու Քեսապի մասին, այլ գրողներէն յիշենք հանգուցեալ Յովսէփ Ղազարեան, Վրէժ Գլնճեան եւ ուրիշներ: Անոնք, իրենց մտքով եւ գրիչով, շատ մեծ դեր ունեցած են Քեսապն ու անոր մշակոյթը ծաղկեցնելու մէջ:

«Գ.»- Ծնորհակալութիւն այս տեղեկութիւններուն համար:

<http://www.kantsasar.com/news/52769-2/>

ԿԻՊՐԱՀԱՅ

ԱՐՅԱԽԸ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒ ԵՒ ՏԱԳՆԱՊՆԵՐՈՒ ԸՆԴՄԷՋԷՆ



Ռեամկավար Ազատական կուսակցութեան տեղական Մարմինը գեղեցիկ եւ օգտակար գաղափարը ունեցեր էր Կիպրոս հրաւիրելու հայրենի յայտնի լրագրող եւ վերլուծաբան Պրն. Թաթուլ Յակոբեանը որ խօսի՝ ԱՐՅԱԽԸ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒ ԵՒ ՏԱԳՆԱՊՆԵՐՈՒ ԸՆԴՄԷՋԷՆ այժմեական եւ հրատապ նիւթին շուրջ եւ իր խօսքի ամարտին՝ պատասխանէ իրեն ուղղուած հարցումներուն:

Ուրբաթ 1 Նոյեմբեր 2024-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Նիկոսիոյ Նարեկ Հայկական Վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Դասախօսութիւնը վերոնշեալ նիւթին շուրջ: Ձեռնարկը կը վայելէր հովանաւորութիւնը Թեմիս Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արք. Օհանեանի եւ նախագահութիւնը կիպրահայ համայնքի Պետական

Ներկայացուցիչ Տիար Վարդգէ Մահտեսեանի: Ներկայ էին Գերշ. Կոմիտաս Արքեպիսկոպոս, Տէր եւ Տիկ. Վարդգէ Մահտեսեան, Գերպ. Տ. Յովհաննէս Ծ. Վրդ. Սաղտրճեան, Տէր Մովսիկ աւագ քահանայ Հապէշեան, Պատգամաւորական եւ Վարչական Ժողովներու, ինչպէս նաեւ կուսակցութեանց եւ միութեանց ներկայացուցիչներ, մամլոյ պատասխանատուներ եւ ստուար թիւով ազգայիններ:



Բացման խօսքով հանդէս եկաւ կուսակցութեան տեղական Մարմնի պատասխանատուներէն Պրն. Եղիա Գայայեան, որ ամփոփ գիծերով ներկայացուց Օրուան բանախօս՝ Թաթուլ Յակոբեանը, ընդգծելով անոր տարած լրագրական անաչառ գործունէութիւնը, անոր անցած երկարամեայ ուղին, հրատարակած գիրքերը, որոնք թարգմանուած են բազում լեզուներու: Ան ներկայիս Հայկական ուսումնասիրությունների ԱՆԻ կեդրոնի համարկարգողն է, Ալիք Մեղիա Հայաստան հարթակի գլխաւոր խմբագիրը:

Պրն. Թաթուլ Յակոբեան իր խօսքը սկսաւ մատնանշելով այն արհաւիրալից աղէտը զոր ազգովին ապրեցանք 2020 թուականի պարտութեամբ եւ անկէ ետք ալ 2023-ին՝ Արցախահայութեան իր բնօրրանէն բռնի տեղահանումով զանգուածաբար՝ շուրջ 120,000 հոգի: Ներկայիս ալ, դիտել

տուաւ ան, «զամանահրաշ» պիտի ըլլար եթէ Հայաստանի Հանրապետութեան հողատարածքը՝ 29,734 քառ. քմ.-ը պահպանուէր որպէս անկախ հանրապետութիւն: Ելլելով ներկայիս մեր երկրին մէջ տիրող շնչառութենէն, ան լայնօրէն անդրադարձաւ անոր



իրավիճակին բոլոր կողմերով: «Յաղթանակները միշտ տեր կ'ունենան... Պարտութիւնը տեր չունենար» նշեց յարգելի բանախօսը, միաժամանակ ընդգծելով որ պատերազմի պարտութեան պատասխանատուն միշտ ալ պետութիւնն է, ինչ ալ ըլլան պարագաները, այսինքն՝ ատենի ՀՀ իշխանութիւնները, մասնաւորաբար ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան: Պրն Թաթուլ Յակոբեան լայնօրէն անդրադարձաւ այն կարեւոր հանգամանքին որ եթէ Հայաստանը զիջէր իր ազատագրած եօթը շրջանները, մանաւանդ 2016-էն ետք, պատերազմը հաւանաբար կանխուէր, սակայն ոչ մէկ ղեկավար կրցաւ այդ քայլը առնել եւ պատմութեան մէջ անցնիլ որպէս հող յանձնող ղեկավար: ՀՀ առաջին նախագահը, Լեւոն Տէր Պետրոսեան՝ 1 Նոյեմբեր 1997-ի «ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԹԷ՞ ՊԱՏԵՐԱԶՄ» իր գրած հռչակաւոր, ամենէն շատ քննարկուած, գովաբանուած թէ քննադատուած յօդուածով, կոչ կ'ընէր սթափութեան, եւ նոյնիսկ մեր վերջին հարիւրամեակի մեծագոյն յաղթանակէն ետք՝ վերադարձնելու այդ շրջանները յանուն խաղաղութեան եւ կը ներկայացնէր իր հրաժարականը:

Մեր կրած ահաւոր պարտութենէն ետք, այժմ դամոկլեան սուրի նման կախուած կը մնայ Հայաստանի գլխուն միջանցքի հարցը, շեշտեց յարգելի բանախօսը, հանգամանօրէն ներկայացնելով Հայաստան-Թուրքիա, Հայաստան-Ատրպէյճան եւ Հայաստան-Ռուսիա յարաբերութիւնները: Ամէն երկիր իր պետական շահերէն մեկնելով կը գործէ, արձանագրեց Պրն. Յակոբեան, իսկ Ռուսիոյ շահերը համընկան Ատրպէյճանի շահերուն: Ան նոյնիսկ չզանցառեց այն հաւանականութիւնը որ Հայաստան կրնայ ընդգրկուիլ ռուսական մեծ միութեան կամ կայսրութեան մը մէջ, եթէ իր գոյութենական անհրաժեշտութիւնը այդ պահանջէ օր մը: Եւ զուգահեռներ անցկացուց Հայաստանի շուրջ կատարուած 1920-ի եւ 2020-ի իրադարձութեանց միջեւ: Այն ժամանակ ալ, Ռուսիոյ շահերը համահունչ եղան Թուրքիոյ շահերուն՝ Լենին-Աթաթիւրք գործակցութեամբ, ինկաւ Կարսը եւ Հայաստան կորսնցուց իր անկախութիւնը, նշեց ան: Դժբախտաբար, աշխարհագրութիւնները չեն փոխուիր, ըսաւ բանախօսը, աւելցնելով որ Ռուսիան, Ատրպէյճան եւ Թուրքիա պիտի շարունակեն մնալ մեր տարածաշրջանին մէջ եւ մենք հարկադրաբար պէտք է կարենանք խուսանալ հմուտ դիւանագիտութեամբ որ չբախինք հակընդդէմ շահերու: Հարցումի մը պատասխանելով, ան յստակօրէն արձանագրեց որ Նիկոլ Փաշինեան դաւաճան չէ երբեք, բայց իր կատարած սխալ հաշուարկը նոյնքան վտանգաւոր էր մեր երկրին եւ անոր ապագային համար, աւելցուց ան: Հակառակ մեր կրած աղէտալի պարտութեան, հայրենի ժողովուրդը ազատ եւ չկեղծուած քուէներով նախընտրեց «ՊԱՏՏՈՒԱԾԸ» քան «ՄԵՐԺՈՒԱԾԸ», հաստատեց ան:

Ինչ կը վերաբերի Արցախի ներկայ դրութեան, Թաթուլ Յակոբեան անոր կորուստն ու հայաթափումը վերագրեց Արցախի հանրապետութեան նախկին ղեկավարներուն՝ Բազո Սահակեան եւ այլք, որոնք յեղաշրջում կատարեցին Արցախի մէջ, շարունակեց ան, որպէսզի նախկինները զարթեն իշխանութիւնը Հայաստանի մէջ: Յստակ ու մեկին:



Այս շատ հետաքրքրական ձեռնարկի աւարտին, Պրն. Գայայեան հրաւիրեց ՌԱԿ Կեդրոնական Մարմնի փոխ-ատենապետ Պրն. Ասատուր Տեվլէթեանը, որ շնորհակալութիւն յայտնելէ ետք Պրն. Թաթուլ Յակոբեանին իր տուած տեղեկութեանց եւ լուսաբանութիւններուն համար, անոր նուիրեց յուշատախտակ մը ՌԱԿ-ի անունով:

Տեղի ունեցաւ վաճառք՝ Թաթուլ Յակոբեանի գիրքերու, զորս մակագրեց ինքը՝ հեղինակը, տեղւոյն վրայ, ինչպէս

նաեւ պատշաճ հիւրասիրութիւն:

Երեկոն վերջ գտաւ Կոմիտաս Արքեպիսկոպոսի սրտի խօսքով եւ Պահպանիչ աղօթքով:

Ապա, կոկիկ հիւրասիրութեան սեղաններուն շուրջ, ներկաները առիթ ունեցան ունենալու Թաթուլ Յակոբեանի հեղինակած գիրքերէն մակագրուած իրենց օրինակները:

Ե. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



ՇԱՏ ՇՈՒՏՈՎ՝

VARTAN TASHDJIAN

BOOK LAUNCH AND
EXHIBITION DURATION

22-23.11

2024

10:00-13:00 & 16:00-20:00

Cultural Center of Strovolos

Nikolaos Mountis Hall


34 Arch. Kyprianou, 2059 Strovolos



VARTAN TASHDJIAN

Join Vartan as he exhibits an intimate and carefully curated collection to coincide with the release of his Biographical Art Book, VARTAN. A perfect opportunity to meet the artist, browse the collection and pick up your signed copy.

**BOOK
LAUNCH**



vartantashdjian.com

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՎԻՃԵՑՆԵԼ ՈՐՈԳԱՅԹՆԵՐԸ ՈՒ ԴԱԻԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԿՈՒՌ ՀԱՄԱՆՄԲՈՒԱԾՈՒԹԵԱՄԲ ՈՒ ՍԹԱՓ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Պարոյր Յ. Աղպաշեան



Բացայայտ է, որ իսրայելեան բարբարոս-խժողութեան-խաժամուժութեան ալիքները, կը շարունակեն իրենց աւերները գործել, մարդկային թէ ինչքային, բնակչային թէ քաղաքային անմարդկային ու զազանազային մոլուցքներով:

«Մարդուկ-տգրուկ»ը, որ աշխարհը իր

ուսին բեռցուցած ասպարեզ կը կարդայ բոլորին, կը յաւակնի ինքզինք ներկայացնել բացարձակատիրական փուճատէր մը, հանդէս կու գայ ստորնաքարշ պոռոտախօսի դերակատարութեամբ, արդէն ցոյց կու տայ, որ ան՝

- Անասնական ծնունդ մըն է
- Կոտորչական գործիչ մըն է
- Ապիկարութեան խորհրդանիշ մըն է
- Մնափառութեան ամբարտաւան մըն է
- Մեծապարծութեան միմոս մըն է
- Մատանայական լրբութիւն մըն է
- Ապականութեան բեկոր մըն է
- Ամբարիշտութեան արիւնսածուծ մըն է
- Մոլեգնութեան գիժ մըն է
- Փողոցայնութեան հրէշ մըն է

Ասիկա է այն իժախօսը, որ՝ պատրաստ է հնձել մարդկութիւնը, կլլել տիեզերքը, ոչ միայն թշնամիները, այլեւ, չգարմանալ, իր երէկուան եւ այսօրուան անբարոյ դաշնակիցները:

Վստահաբար, ա՛յս է պատճառը, որ նորօրեայ ՁԱԽԱԻԵՐԱԿԱՆ լիցքով սրսկուած «Բենիամին»ը իր մկանները ցոյց կու տայ ամենուր, իր բռունցքները կը պարզէ բոլորին, իր սպառնալիքները կը հնչեցնէ վերէն ու վարէն, իր զազրաբանութիւնները կը տարածէ հոս ու հոն, այն տակառաբանութեամբ, որ ինք՝ նոյնիսկ եթէ մնայ առանձին, «մենակ եմ մնացել»ի տրամաբանութեամբ ու գործունէութեամբ, պատրաստ է ստանձնել այդ չարագործութիւնները, պատրաստ է ոտնակոխել ամէն ոք, պատրաստ է «թացն ու չոր»ը այրելու, պատրաստ է բնաջնջելու ամէն ինչ ու պատրաստ է բզբտելու նոյնիսկ... մուկերը, ուտիճները, կատուները, շուներն ու միւսները:

Այսպիսի գիշակեր մըն է, որ կը դեգերի ու կը մոնչէ, սարսափեցնելով նոյնիսկ իր անարժան մեծաւորները, իր մեղսակից իրաւատերերը, իր ցեցաւոր կողմնակիցները, իր անողնաշար զօրակիցները, իր ստրկամիտ ընկերակիցները:

Բոլոր անոնք, որոնք լռակեաց են, թուլամորթ, անսկզբունք, անձնակեղրոտան կամ անգործնական, կրնա՞ն օր մը անդրադառնալ մարդկութեան առջեւ, թէ ինչո՞ւ իրենք, գիտակցաբար թէ ոչ, մնացին անզօր, անկարող եւ անուժ, ի տես «Բենիամին»ի մը արկածախնդրական ու խաւարամտական սադրանքներուն ու կապկութիւններուն:



Այս երեւոյթներուն զուգահեռ եւ աւելի վեր, կայ նաեւ խիստ քողարկուած ու վտանգաշատ կարգավիճակ մը, առնչուած՝ հրեական այն դաւադրական ծրագիրներուն, որոնցմով ան կը միտի, պատերազմական գործողութիւնները աւելի սրել, դիմելով նորանոր խաղբութիւններու:

Իսկ ատոնք ի՞նչ կրնան ըլլալ, եթէ ոչ, լիբանանցիները «զբաղցնել» իրենց ապահովական միջոցառումներով, պաշտպանութեամբ եւ ապահովութեամբ, որմէ օգտուող պիտի ըլլան, անտարակոյս «Բենիամին»ական հրոսակները, եւ ասպատականները, իրենց գրգռիչ ու հրահրիչ հնարքներով, որոնցմէ կրնան տեղակ չըլլալ լիբանանցիները կամ անձանօթ ըլլան նման փորձութիւններուն:

Իսրայէլեան խամաճիկները, որոնք կը յաւակնին, որ իրենք ինքնապաշտպանութեան մունետիկներ ու հերոսիկներ են, ատոնք սոսկ քաղաքական փրփուրներ են, նկատի ունենալով ատոնց մակերեսայնութիւնները եւ անհամոզիչութիւնները:

Չէ՞ որ, «մեսիական» ոլորտներով համակուած ու համակարգուած ծնունդներ են անոնք, հետեւաբար, առաջնակարգայիններ, մինչ անոնք կը մնան (ու են), տարրական առաքիւնութիւններէ ու բարեմասնութիւններէ զուրկ խլուրդներ:

Ճիշդ է թէ՛ ճակատող երկու կողմերը, ուժային ու զօրութեան յղացքներով, նոյն նժարներուն վրայ կարելի չէ դնել, բայց, ո՞վ ըսաւ թէ մէկը միւսէն աւելի տիրապետող է, թէկուզ, Իսրայէլը ունենայ թռիչքային-օդային առաւելութիւններ, մինչդեռ ատոնք երբեք չեն կրնար գերազանցող ըլլալ, ի դեմս ցամաքային ծուղակային յարձակումներուն:

Չմոռնա՛լ նման «ոչ-պաշտօնական» պատերազմներու պարագային, որքան ալ օրինական բանակ մը ըլլայ մէկը, բացարձակապէս չի կրնար «չափուիլ» դիմացինին հետ, որ ֆետայական անձնագոհութեամբ ու կամաւորականութեամբ կը կռուի եւ, ամենէն կարելորը, ան օժտուած կ'ըլլայ բացառիկ հմտութեամբ ու ճկունութեամբ, ճարտարութեամբ ու ճարպիկութեամբ, ինչ որ մեծ յարձակողականութեամբ ու ժրաջանութեամբ կրնայ իրագործել:

Ասիկա, նման պարագաներու, ոչ միայն անգիր իրականութիւն մըն է, այլեւ՝ ընդունուած եւ ընթացիկ գործողութիւն մը, որովհետեւ, պատմականօրէն, անոնք ցոյց տուած են անոնց «չոր»ութիւնը ու «դառն»ութիւնը, ի նպաստ «ոչ-օրինական» ուժերուն, թէկուզ անոնք հարիւր տոկոսով յաղթական դուրս չգան, բայց, անպայմանօրէն՝ ոչ-պարտուողական:

Թերեւս այս է պատճառը, որ Իսրայէլը ինքզինք կը զգայ «խոցոտուած», իսկ ընդդիմութիւնը՝ «ամրացուած», որովհետեւ եթէ առաջինը, ամէն անգամ, որ կը կարծէ երկրորդ կողմը տկարացուցած ըլլալ, կը պարզուի, որ իր հաշիւները այնքան ալ ճիշդ ու տեղին չեն:

Ուրեմն, երբ «պատերազմական դաշտ»ը բաց է ու հասանելի այս կամ այն կողմին, այս հանգրուանին, ամենէն աւելի տուժողը կ'ըլլայ իսրայէլեան թելը, իր օդանաւային-թռիչքային ուժը բաւարարուած չնկատելով ու չկրնալով իր հզօրութիւնը պարզելու ու հաստատելու, որովհետեւ, դիմացի կողմը, իր ընդատակեայ կամ այլ ճարտարագիտութեամբ ու վարպետութեամբ, միշտ ալ խուսանաւելու առաւելութիւնը ու փրկութիւնը ունենալով:

Իսրայէլը, եթէ պատերազմական զինամթերքային հզօրութիւն ու կարելիութիւն ունի, պաշտպանուելէն աւելի հակադարձելու կամ հակադարձելու, այս հանգրուանին անճրկուելու պայմաններու առջեւ կը գտնուի, խուսափելով նոր գոհեր տալու հաւանականութիւններէն, որուն համար, հետեւաբար, ստիպուած է ՆՈՐ ուղիներով ու դրոշմներով իր անողոք պատերազմը մղելու, դիմելով զանազան խորամանկութիւններու, նենգամտութիւններու ու հնարամտութիւններու, որոնց արդէն տխրահռչակներէն կը նկատուի:



Այն խառնիճաղանճը, իր պատերազմական բուռն եւ ամեհի ոլորտներով, որ յետ քանդումներու ու զոհերու վայրագութեանց, որոշապէս նոր հանգրուանի մը մէջ մտած է, առանց բառացիօրէն յայտարարուած ըլլալու, բայց, անպայմանօրէն լռելեայն գործադրելու եւ իրականացնելու միտումներով:

Այս վերջին տարբերակին (բայց, ոչ վերջնագոյնին) փորձերը կատարուեցան, երբ իարայլեան օդային հրոսակները, օդանաւային թռիչքներով, թիրախաւորեցին այնպիսի շրջաններ, որոնք առ այդ գերծ մնացած էին նման յարձակումներէ:

Ասոնց ամենէն ցայտուն օրինակներէն հանդիսացան, Պասթայի ու Նուէրիի մարդախիտ թաղամասերը, իբր թէ «որսալու» համար յեղափոխականներ, հաւատալով որ անոնցմէ ոմանք հոն ապաստանած են, սակայն, կը պարզուի որ այդ բոլորը յերիւրածոյ ու շինծու պատրուակներ են, քանի կը ծառայեն միայն հանդարտ շրջաններ եւ անմեղ քաղաքացիներ պարսաւելու:

Իսկ աւելի ահաւորը ու նորութիւնը այն էր, երբ նոյն «հերոս»ները նշանակետ վերցուցին Զղարթայի խաղաղ ու հեռաւոր գիւղերէն մէկը, դարձեալ պատրուակելով, որ հոն կը գտնուի ընդդիմադիր պատասխանատու մը:

Արդիւ՞նք. տասնեակներով ոչ-զինեալ անմեղներ եւ անոնց ընտանիքներ, մէկ հարուածով, զոհուեցան ու մոխրացան:

Երբ մօտէն կ'ուսումնասիրենք կամ կը խորանանք այս յարձակումներուն մէջ, իրենց ժամանակացուցային, դիրքային, տարածքային ու ծրագրային դիտանկիւններէն, կը պարզուի որ՝ այլանդակ ոտխը, այս եղանակով, կը հետապնդէ, Լիբանանէն ներս, յաջողցնելու միջհամայնքային բախումներու ու քաղաքացիական պատերազմի բռնկելի մթնոլորտ մը:

Հոս կրնայ հարց ծագիլ, թէ այս խեղկատակութիւնը կրնա՞յ իրականանալ կամ պարարտ հող շահիլ, այնքան ատեն որ լիբանանցիներու ժաթափ է, տաղտոյնուած ու մոլորուած:

Ճիշդ հոս է, որ «Բենիամին»ը դարանակալ ճիգեր կը թափէ լիբանանցիները իրար ձգել, իրենց դաւանանքային ու շրջանային զգացումները հրահրելով, միտքերը գրգռելով ու տրամադրութիւնները բորբոքելով, սին հաւատքով, որ այս դժիւեմային նպատակով կրնայ իր լրիւ ծրագիրը լիացնել, նաեւ համոզուած ըլլալով, որ այս ձեւով, արդէն իսկ կազմալուծուած երկիրը կը կքի, կը հաշմուի, կը հիւծուի, իսկ ինք կը դառնայ յաղթական... անկումատէր պետութեան մը տգեղագոյն դիմագիծով:

Անշուշտ, ասիկա, հերթական ոտնձգութեան նոր փորձ մըն է, որուն յաջողութեան համար ան նախապատրաստուած է, ամենայն մոլեռանդութեամբ, որուն յաջորդ քայլը կրնայ նոյնքան կործանարար ըլլալ, հիմնովին անդամալուծելով երկիրը ու զգայազրկելով ժողովուրդը:

Որպէսզի այս դարձդարձիկ միջամտութիւնները սանձուին, սահմանափակուին եւ ընդհանրապէս ձախողին, լիբանանցիները, իրենց ազգային գիտակցութենէն եւ յանձնառու առաջադրանքներէն մեկնելով, պէտք է համախմբուին, միանան ու կեդրոնանան, վիժեցնելու որեւէ նման հաւանական սահանքներ, յանուն Լիբանանի գոյատեւութեան ու լիբանանցիներու յաւերժութեան, անմիջական նպատակաւալացութեամբ եւ ազդու ամրակուռութեամբ:


Կը բաւէ որ կուռ գիտակցութիւնը առողջ հեռատեսութիւնը ու սթափ մտածողութիւնը յաղթանակեն ու դրսեւորեն իրենց անխախտելի երթուղին:

(Պէյրութ)

«Մեր դիտարկումով Ու Դատումով» Շարքէն:

ԿՐ ՄՊԱՍԵՆՔ ԼՈՒՍԱԻՈՐ ՎԱՂՈՒԱՆ

Գեորգ Պետիկեան



Դարձեալ ես ինձի հետ հաշտ չեմ: Շուարած եմ: Կարծես քան մը նորէն փլած է հոգիիս մէջ, բազմախաւ տառապանքի նման: Որովհետեւ, ազգային ալեկոծութիւններն ու մեր երազանքները կեանքի սովորական հոլովոյթը դժուարացուցած են: Նաեւ ազգովին դժգոհ ենք իրարմէ: Գանգատներ շատ ունինք: Մեր բոլորին երջանկութիւնը կորսուած է: Կասկածը իր հակասական զգացումներով կերած է նաեւ մեր հոգին: Անոր համար՝ հանգիստ չունինք:

Ամէն մարդ կ'ուզէ մեզ թալանել, կողոպտել, խաբել, մեզի ստել: Քաղաքական գայլերը պատրաստ են մեզ յօշոտելու: Անստոյգ իրավիճակ:

Հայրենիքէն հասնող լուրերը երկար ատենէ ի վեր կը

մրճահարեն մեր միտքերը:

Այս բոլոր մտահոգութիւնները թէեւ նորութիւններ չեն, սակայն նաեւ միայն իմս կամ ձերն ալ չեն, այլ՝ բոլորիս կը պատկանին ու իրականութիւն ըլլալէ չեն դադրիր:

Իրականութիւնը այն է, թէ այս օրերուն, իբրեւ հայեր, մեր մօտ խոր տխրութիւն կայ: Հասկնալի եւ նոյնքան ալ անհասկնալի: Ցաւալի իրավիճակ: Տակաւին՝ տխրաշունչ պատերազմի յիշատակ: Հայրենիքի համար զոհուողներ, իսկ միւս կողմէ ալ՝ համայնական հողի կորուստ եւ վիշտ: Աւելին՝ սերունդի մը կորուստը: Մեր ազգային երազները սկսած են խաւարիլ:

Արդ՝ ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ իրագործել մեր պատմական երազը:

Ամէն առիթով եւ մամուլով նման «բաներ» լոյսին բերած ենք, խօսած, պատմած ու բացատրած ենք:

Միշտ յիշեցուցած ենք, թէ պղտորած է ազգային մեր կեանքը: Այս մասին ո՛չ լսող գտած ենք, ո՛չ կարդացող եւ ոչ ալ առաջքը առնող: Անոր համար բոլորիս շրթներուն վրայ նստած են շարունակական աղօթքներ ու մաղթանքներ, իսկ մտքերուն մէջ՝ լոյսի երազանքներ:

Լաւ յիշենք... Բոլոր ժամանակներուն մենք վտանգներու տակ մնացած ենք եւ եթէ չենք անհետացած, որովհետեւ վտանգի պահուն գտած ենք մեր իսկութիւնը:

Այդուհանդերձ, անգամի մը համար մենք մեզի հարց տանք, թէ ո՞ր ենք այսօր... Արդեօ՞ք մոռցած ենք մեր իսկութեան իմաստն ու որակը: Արդեօք կա՞յ գիրք մը, որ կը խօսի հայու ոգիին, անոր զօրութեան մասին: Խնդրեմ, գտէ՛ք, որ կարդանք: Բերէ՛ք, սորվի՛նք: Օրինակէ՛նք: Օգտուի՛նք:

Գիտենք որ երբ ոտքի կենանք, մեր բարեկամներու թիւն ալ կը շատնայ:

Հարցը այն է, թէ նման մտահոգութիւններու առջեւ յանկարծ մեր մտքերուն դիմաց «ինչպէ՞ս»-ներու շարան մը կը յայտնուի:

Այսպէս.

_ Ինչպէ՞ս կարելի է չափել հայուն ուրախ եւ տխուր իրավիճակները:

_ Ինչպէ՞ս հաշտուիլ հայրենի ներկայ անըմբռնելի վիճակին հետ: Ինչպէ՞ս ճոխացնել հայուն եւ անոր հայրենիքին վաղուան յոյսը: Ինչպէ՞ս գտնել վաղուան հայուն յատուկ լուսաւոր եւ պատշաճ «ճամբան»: Ինչպէ՞ս սողոսկիլ ներկայի հայ մարդոց թմրած ուղեղներուն մէջ: Ինչպէ՞ս վերաշինել ու բարեփոխել հայրենի կեանքը:



Կը զարմանամ, թէ մարդիկ ինչպէ՛ս կը տանին այս կեանքը: Յուսախաբ եմ եւ յաճախ ալ տխրութեամբ կը մտածեմ: Երբեմն նման զգացումները կը խեղդուին կուրծքիս տակ: Բարդ ընթացք:

Մեր բոլորին երազանքն էր կառուցել եւ ունենալ լուսաւոր Հայաստան մը:

Այս նպատակը իրագործել չկարենալու համար՝ յուսահատ ենք: Ծովը ինկած գերանի նման կ'երերանք ներկայի դէպքերու այիքներուն վրայ: Կ'ապրինք միայն երազներով: Կ'երազենք ունենալ կայուն պետութիւն մը, որ տէրը ըլլայ մեր բոլոր իրաւունքներուն:

Անհրաժեշտ է ստեղծել մթնոլորտ մը, ուր կարելի պիտի ըլլայ փոխանցել սէրը, գուրգուրանքը եւ յարգանքը հանդէպ ազգային մեր բոլոր արժէքներուն, որոնք ամուր խարսխուած են հայ ժողովուրդի յաւերժութեան հաւատամքին վրայ:

«Կեանքը չար է» կ'ըսուի: Ուստի էական է ականջ տալ մեր արմատներու ձայնին:

Կարծես մոռցած ենք ազգային կեանքի թաքուն ձայներուն ականջ դնել: Այդ պատճառով՝ նեղցած է հայուն հորիզոնը:

Համայն սփիւռքի համար այս բոլորը տեսանելի եւ այրող հարցեր են: Ահա թէ ինչո՛ւ եւ ինչպէ՛ս Հայրենիքը ամէն օր կը բաբախէ մեր սրտերուն մէջ: Որովհետեւ միշտ երազած եւ յուսացած ենք, որ Հայաստան այսպիսի երկիր մը պէտք չէ ըլլար... Ճշմարտութիւն ըսուածը կորսուած է եւ դարձած է անլսելի ու անարձագանգ: Բայց դարձեալ, ի՛նչ որ ալ ըլլայ... Հայրենիքը մերն է:

Արդ, այս առթիւ, անմեղ հարցումս.

_ Մարդոց հոգիները ե՞րբ պիտի լեցուին լոյսով:

Պէտք է լաւ ըմբռնել, որ մեր գիտցած Հայաստանը շուկայ չէ... Ան գաղափա՛ր է... հոգեկան իրականութի՛ւն է... անհրաժեշտութի՛ւն է... պատմական հարստութի՛ւն է: Հարուստ, հզօր եւ գեղեցիկ է մեր երկիրը: Ան նաեւ պէտք է ըլլայ ու մնայ մեր բոլորի կեանքին բանալին եւ առաքելութիւնը:

Պայման է մասնակցիլ հայրենի ընդհանուր կեանքին: Բայց այնպէս կ'երեւի թէ մարդ չ'ուզեր շարժիլ: Պէտք է հարցերուն էութեան հասնինք եւ ըստ այնմ ուղղութիւն ճշդենք մեր կեանքին մէջ, ըլլայ ան հաւաքական կամ անհատական:

Ըսէ՛ք...ե՞րբ պիտի թեւակոխենք նոր, յուսատու եւ փայլուն հանգրուանը մեր երկրին: Մտքիս մէջ մեր վաղն է աւելի լուսաւոր եւ կենսախիւնդ:

Հաւատացէ՛ք, մեր անհոգութեան եւ գիտակցութեան պակասին կրնայ գոհ երթալ նաեւ մեր անկախութիւնը: Մեր ինքնութեան հաւատարիմ մնալու կանչն է այս:

Մեր կենսագրութիւնը անբաժանելիօրէն կապուած է մեր հողին հետ: Մեր մտածումները համախմբել եւ նորը կառուցել է պէտք: Մեր յառաջդիմութիւնը պայմանաւորուած է մեր կատարած շինիչ քննադատութեան հաստատ ներկայութեամբ: Էական է յարմարուիլ ժամանակակից կեանքի պայմաններուն եւ պահանջներուն հետ:

Ներկայիս մեր հայկական ինքնութիւնը կը փնտռենք ամէն տեղ: Նոր սերունդին ներշնչել, անոր վրայ գուրգուրալ եւ զայն ազգային կեանքին հաղորդակից դարձնել է պէտք: Նոր մտածողութեան պահանջք կայ: Անհրաժեշտ է նոր շունչ տալ ազգային ոգիին: Բոլորս ալ կանգնած ենք պատմութեան ճեղքուած ճամբուն վրայ, որու գլխուն վրայ միշտ վտանգ կախուած է: Ժամանակը շատ բան կը թելադրէ:

Չեմ գիտեր ինչո՛ւ նման «բաներ» լուրջի չենք առած: Կարծես տարբեր մոլորակի մէջ կ'ապրինք: Չեմ ուզեր հաւատալ, այլ՝ միայն յուսալ: Պատմութիւնն ու պատմականը ուրանալ՝ դաւաճանութիւն է: Միայն զգացումներով պետութիւն չստեղծուիր: Պէտք է հասնիլ խոր գիտակցութեան:

Ու անհամբեր կը սպասենք լուսաւոր վաղուան: Ահա՛ այն ժամանակ միայն գտած կ'ըլլանք մեր ճիշդ ճամբան:

<http://www.kantsasar.com/news/52764-2/>

ՄՐՏԻ ԽՕՍՔ՝ ՍԷՄ ՍԻՄՈՆԵԱՆԻ ՀԲԸՄ-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒՆ ԱՌԻԹՈՎ

ՓԱՆՈՍ ԹԻԹԻԶԵԱՆ



12 Հոկտեմբեր 2024ին, Նիւ Եորքի մէջ կայացած 93րդ Ընդհանուր ժողովին, ՀԲԸՄի նախագահական ջահը Պերճ Սեդրակեանէն փոխանցուեցաւ Սէմ Սիմոնեանին: Շատ պիտի փափաքէի անձամբ ներկայ ըլլալ փոխանցման արարողութեան, սակայն յառաջացած տարիքս չարտօնեց ինծի նման քայլ մը առնելու:

Ես փորձեցի կարելի չափով մօտէն հետեւիլ անկլինադարձային այդ պահուն: Այժմ աչքիս առջեւ ունիմ Պերճ Սեդրակեանի հրաժեշտի ելոյթը, ինչպէս նաեւ Սէմ Սիմոնեանի պաշտօնի ստանձնումի խօսքը: Միութեան 7րդ նախագահ Պերճ Սեդրակեանի 22 տարուան նախագահութեան շրջանը (առաւել, միութեան վերին ղեկավարութեան մէջ իր դերակատարութեան աւելի քան 45 տարիները), յատկանշուեցաւ մեր ժողովուրդի եւ ընդհանրապէս աշխարհի պատմութեան ամենաբարդ եւ աննախադէպ զարգացումներով եւ յաճախ աղէտալի հետեւանքներով, որոնց դէմ յանդիման միութիւնը հաւատարիմ իր առաքելութեան, գործեց անխոնջ, քայլ պահեց սրընթաց փոխուող ժամանակներուն հետ, արդիւնաւորութեամբ յառաջ տարաւ իր ազգանուէր ծառայութիւնը, մնալով միասնականութեան օրինակ եւ խորհրդանիշ, որպէս հայ ժողովուրդին եւ լայն շրջանակներու համակրանքը եւ վստահութիւնը վայելող կազմակերպութիւն: Այժմ այդ շրջանը կ'անցնի պատմութեան դատաստանին եւ նոր էջ մը կը բացուի միութեան կեանքէն ներս, Սէմ Սիմոնեանի որպէս Միութեան 8րդ նախագահ պաշտօնի ստանձնումով:

Ամէն բանէ առաջ, մեր ժողովուրդին եւ հայրենիքին ներկայ օրհասական լինելու չլինելու անորոշ անկլինադարձին, կը փափաքիմ ղեկավարութիւն հասկացողութեան մասին ընդհանուր կարգ մը միտքեր յայտնել:

Վահան Թէքեան Հայոց Ցեղասպանութեան անմիջապէս յաջորդող շրջանին իր մէկ բանաստեղծութեան մէջ հետեւեալ միտքը կը պարզէ. «Կարենալ ապրելու համար այսուհետեւ մենք պէտք ունինք հպարտութեան»: Իսկ մենք այս պահուն կարենալ ապրելու համար ամէն բանէ առաջ պէտք ունինք ղեկավարութեան: Այս խօսքը որքան ճիշդ է հայրենիքին համար, նոյնքան եւ աւելի ճիշդ է Հայկական Բարեգործական Ընդհանուր միութեան համար:



Մէմ Սիմոնեանին գործածած բառերով՝ «As we honor our past achievements and progress, it is essential not to be wedded to and cling to outdated methods. This is the age of the internet, technology, and artificial intelligence, and our approach to educating and engaging the youth must evolve to make the most of these transformational advances» (Մինչ կը գնահատենք մեր անցեալի ձեռքբերումները եւ յառաջդիմութիւնները, անհրաժեշտ է չփարիլ կամ կառչած չմնալ ժամանակավրէպ գործելակերպերու: Ասիկա համացանցի, ճարտարագիտութեան եւ արուեստական բանականութեան դարն է: Երիտասարդութիւնը դաստիարակելու եւ գործի մղելու մեր մօտեցումները պէտք է մշակուին եւ առաւելագոյնս օգտուին փոխակերպող այս յառաջդիմութիւններէն):

Խտացած ճշմարտութիւնը եւ պահուն պահանջը, ըսուած յստակ, պարզ, գործնական եւ հեռուն նայող տրամաբանութեամբ: Խօսքը ղեկավարութեան մասին է: «Հասկանալ պահը»՝ ամէն ինչ է ղեկավարութեան համար: Ղեկավարութիւնը յարաբերութիւն եւ միաժամանակ պարագայական երեւոյթ է (leadership is both relationship and situational phenomenon): Յարաբերութիւն, որովհետեւ հետեւորդները կը փափաքին տեսնել ղեկավարներ, որոնք խորապէս կ'ըմբռնեն իրենց տենչերն ու կարիքները, ինչպէս նաեւ մարտահրաւերներն ու ստեղծուած առիթները: Իսկ պարագայականութիւնը կը վերաբերի պահի ճիշդ ըմբռնումին: Այս է ղեկավարութեան ամբողջական հասկացողութիւնը: Եւ վերջին հաշուով, ղեկավարութիւնը արդիւնք տալն է:

Ո՞վ է ՀԲԸՄի նորընտիր նախագահ Մէմ Սիմոնեանը: Ան իր ստեղծած ճարտարագիտական (technology) կրթութեան ճիւղաւորուած համակարգով, յաչս նոր սերունդներուն փաստած է թէ ինք, ինչպէս նաեւ իր եզակիօրէն համեստ տիկիւնը Սիլվան, սերտօրէն առնչուած են երիտասարդութեան: Այժմ ժամանակն է իրեն գործակից ղեկավարութեան հետ միատեղ, միութիւնը առաջնորդելու դէպի նոր ապագայ:

Ինչո՞ւ Մէմ Սիմոնեան ներշնչող դէմք մըն է: Իր համեստ ծագումը, այն, որ ինք ծնունդ առած է Լիբանանի Պուրճ Համուտի հայաշատ միջավայրին ծոցէն, իր փայլուն միտքը, ճարտարագիտական պատրաստութիւնը, զինք դարձուցեր են ստեղծագործ: Իր հայրն ու ինք եւ իր տիկիւնը, իրենց ազգային կրթութիւնը ստացեր են ՀԲԸՄի վարժարաններէն ու հասակ առեր Պօղոս Նուպարներու ներշնչող ոգիով: Պողպատեայ կամքով ու հաւատքով ծառայելու համար ժողովուրդի մը, որ կ'ուզէ ապրիլ, գոյատեւել եւ ստեղծագործել: Այս բոլորին պէտք է միացնել Սիլվային ոսկեղէն սիրտը, պարգութիւնը, ներշնչող հմայքը, մղիչ ուժը, ծառայելու համար ազգին ու հայրենիքին:

Մէմ Սիմոնեանի ելոյթին մէջ կը կարդանք հետեւեալ իմաստուն խօսքերը:



«Our focus remains on ensuring prosperity in Armenia and preserving our identity in the Diaspora, without aligning with or endorsing any political party or agenda» (Մեր մտասուեւեռումը կը մնայ բարօրութիւն ապահովել Հայաստանի մէջ եւ պահպանել մեր դիմագիծը Սփիւռքի մէջ, առանց յարելու որեւէ քաղաքական կուսակցութեան հետապնդած նպատակներուն): Աւելի ետք՝ «In the coming year, I plan to visit all of our AGBU chapters and the local constituents they serve, accompanied by Sylva. Her unwavering support for my challenging endeavors is not only comforting but also essential. Together, we aim to build stronger connections with our leadership and communities» (Յաջորդ տարի կը ծրագրեմ Սիլվային ընկերակցութեամբ այցելել ՀԲԸՄի մեր բոլոր մասնաճիւղերը եւ տեղական այն շրջանակները որոնց կը ծառայեն անոնք: Սիլվային անխախտ աջակցութիւնը ոչ միայն օգտակար է իմ դժուար աշխատանքներուս, այլեւ անհրաժեշտ: Միասնաբար, մեր նպատակն է զօրաւոր կապեր եւ յարաբերութիւններ մշակել մեր ղեկավարութեան եւ համայնքներուն հետ):

Վերջացնելէ առաջ իմ խօսքս, կ'ուզեմ մէջբերել նախագահ Ճան Քենետիի ըսած յայտնի խօսքը, Ամերիկայի նախագահ ընտրուելուն առիթով, 30 Յունուար 1961ին: Ասիկա կ'ուղղեմ մեր երիտասարդներէն իւրաքանչիւրին՝ «Ask not what your country can do for you; ask what you can do for your country (Մի հարցնէք թէ ձեր երկիրը ինչ կրնայ ընել ձեզի համար, այլ հարցուցէք, թէ դուք ինչ կրնաք ընել ձեր երկրին համար):

Մեր սրտագին բաղձանքն է, որ մեր բարձրացող սերունդը ջանայ տալ իր կարելին, որպէսզի ապրի եւ գոյատեւէ Սփիւռքի հայր, հայրենի ժողովուրդն ու հայրենիքը:

Ընտանեօք սրտանց կը շնորհաւորենք Մէմ եւ Սիլվա Միմնեանները, այն հաստատ համոզումով, որ անոնք իրենց առաւելագոյնը պիտի ընծայեն Հայկական Բարեգործական Ընդհանուր միութեան, ազգին ու հայրենիքին:

ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ԻՐԱՆԱՄԷՏ «ՀԻՒՄԷՅՆԻՅՅՈՒՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Յարութիւն Իսկահատեան – Պէրուք



Իրանի Իսլամական Հանրապետութեան եւ Սուրիոյ Արաբական Հանրապետութեան ղեկավարութեամբ քանի մը տասնեակ տարիներէ ի վեր Իսրայէլի դէմ պայքարելու նպատակով ճակատ մը կազմուած է, որ կը կոչուի «Դիմադրութեան Առանցք»: Ասոր հակառակորդ երկիրները, որոնք Իսրայէլի դաշնակից են կամ բարեկամ, զայն կը կոչեն «Մերժումի ճակատ»: Իսրայէլի դէմ



իրենց պայքարին մէջ Իրանի եւ Սուրիոյ կ'օժանդակեն կարգ մը կրօնական եւ զինեալ կազմակերպութիւններ, որոնցմէ են «Իրաքի Հզպալլան», «Լիբանանի Հզպալլան», ինչպէս նաեւ ազրպէյճանական «Հիւսէյնիյուն» (Hüseynçilər – Հիւսէյնճիլեր- ազրպէյճանական գրութեամբ) կազմակերպութիւնը եւ ուրիշներ: Վերջին տասնամեակին Իրան յաջողած է զինուորագրել շիա համայնքի պատկանող աֆղանիստանցիներ ու փաքիստանցիներ «Դիմադրութեան Առանցք»-ին մէջ: «Հիւսէյնիյուն» կազմակերպութիւնը Իսրայէլի դէմ իր պայքարէն բացի ունի այլ առաքելութիւն մը՝ Ազրպէյճանի համակարգը տապալել եւ հաստատել Իրանի համակիր հակա-իսրայէլեան վարչակարգ մը: Ըստ որոշ տուեալներու «Հիւսէյնիյուն» կազմակերպութիւնը ներկայիս Ազրպէյճանի մէջ ունի 15 հազար անդամներ եւ համակիրներ:

Դրացի երկիրներու միջեւ յարաբերութիւնները վերիվայրումներով կ'ըլլան, քանի որ հասարակաց շահեր զանոնք կը բարեկամացնեն, իսկ տարակարծութիւններ իրարմէ կը հեռացնեն: Վարչակարգերը այս յարաբերութիւնները կը ջանան հաւասարակշռուած պահել՝ բախումներէ խուսափելով: Նման իրավիճակի մէջ կը գտնուին Իրանն ու Ազրպէյճանը: Ցարդ անոնք իրար միջեւ յարաբերութիւնները հաւասարակշռի տակ կը պահեն, քանի որ այն պահուն էրբ տարակարծութիւնները կամ նոյնիսկ տարակարծութիւն մը իր սահմանէն դուրս գայ, անոնց միջեւ զինեալ բախումը անխուսափելի կը դառնայ: Իրան չափազանց դժգոհ է Ազրպէյճանի վարչակարգին Իսրայէլի տուած հսկայական դիւրութիւններէն, սակայն ցարդ կը փորձէ անոր հետ իր յարաբերութեանց հաւասարակշռութիւն տալ: Թէեւ երկուքին միջեւ զինեալ բախում տեղի չէ ունեցած մինչեւ օրս, սակայն Իրան յաջողած է ստեղծել իրեն համակիր ու նուիրուած կազմակերպութիւն մը Ազրպէյճանի մէջ՝ «Հիւսէյնիյուն»ը, որ Իրանի չափ ու աւելի հակա-իսրայէլեան կրօնական - շիա- կառոյց մըն է, որոշ կրօնական մշակոյթով ու զէնքով սկսած է գործել Ազրպէյճանի մէջ: «Հիւսէյնիյուն» կազմակերպութիւնը սկիզբ առած է քանի մը շիա կրօնասէր ուսանողներէ, որոնք Իրան մեկնած են Ազրպէյճանէն, կրօնական ուսում ստանալու նպատակով: Թալիշ ցեղին պատկանող Թոհիս Իպրահիմ Պէլլի եղած է այս կազմակերպութեան հիմնադիրը: Ըստ անոր, վեց շիա ուսանողներ 2013-ին Իրանէն մեկնած են Սուրիա, պաշտպանելու համար «Սուրբ Խորան»ի (Իսլամական շիա համայնքի սրբութիւններէն- Յ. Ի.) մակարդակին պատկանող արժէքներ Իսրայէլի դէմ: Հետզհետէ շիա համայնքի զաւակներէն շատեր միացած են այս կազմակերպութեան՝ թէ՛ կրօնական զգացումներու մղումով եւ թէ՛ ալ դրողուելով այն իրողութենէն, որ Ազրպէյճանի սիննի համայնքէն 1500 հոգիներ միացած էին «Իսլամական Պետութիւն» կազմակերպութեան, որ աւելի ծանօթ է ՏԱԷՇ անունով: «Հիւսէյնիյուն» կազմակերպութեան անդամներուն մեծ մասը Թալիշ համայնքէն կու գան: Ազրպէյճանի մէջ թալիշները կեդրոնացած են երկրին հարաւ արեւելքը իրանեան սահմանին մօտ: Անոնք զօրաւոր մշակութային եւ պատմական կապեր ունին Իրանի հետ: Ազրպէյճանցիներէն անոնց կրած նեղութիւնները եւ խտրականութիւնը, փոքրամասնութիւն կազմող Թալիշ համայնքը մղած է դիրքորոշուելու Իրանի կողքին:

Մինչեւ 2017 թուականը «Հիւսէյնիյուն»ները բաւարար չափով ճանչուած չէին Միջին Արեւելքի մէջ: Երբ Իրանի Յեղափոխական Պահակագունդի զօրավար Քասիմ Սուլէյմանի (հետագային Իսրայէլի կողմէ սպաննուած Իրաքի մէջ- Յ. Ի.) անոր պաշտօնական ճանաչում տուաւ, կազմակերպութիւնը ամէն կողմէ ճանչուեցաւ եւ սկսաւ գործօն դեր վերցնել Սուրիոյ մէջ: Իրանի մէջ երեսփոխաններու քանի մը հոգիներ խումբ մը, որ Ազրպէյճանի բռնապետ Իլհամ Ալիեւի կողքին եւ անոր ի նպաստ գործունէութիւն կը տանէր, Սուլէյմանիի այս արարքին դէմ դիրքորոշուեցաւ: Սակայն եւ այնպէս վերջինս վերահաստատեց «Հիւսէյնիյուն» կազմակերպութեան օրինականութիւնը եւ անոր թիկունք կանգնեցաւ: Սոյն կազմակերպութեան առաջնորդ տարրերէն Օրխատ Մամատով, որ իր ուսումը Ռուսիոյ մէջ ստացած է, դարձաւ Միւլէյմանիի անձնական թարգմանիչը,



մանաւանդ ռուսերէն-պարսկերէն լեզուներու, երբ ան կ'ընդունէր ռուս զինուորական պատասխանատուներ:

Ալիեւի վարչակարգը ամբաստանեց «Հիւսէյնիյուն» կազմակերպութիւնը երկրին երկրորդ քաղաքի Կանճայի (Գանձակ) քաղաքապետ Էլմար Վելիեւը ահաբեկչութեամբ սպաննելու յանցանքով: Մինչ «Հիւսէյնիյուն»ը հերքեց իր որեւէ ուղղակի առնչութիւնը այդ սպաննութեան մէջ, ազերիներէն շատեր դրուատեցին այդ սպաննութիւնը կատարողները, որովհետեւ սպաննել քաղաքապետը փտածութեան օրինակ կը նկատուէր երկրին մէջ եւ անոր վատ համբաւը տարածուած էր ամենուրեք: Այս դեպքէն ետք «Հիւսէյնիյուն» կազմակերպութիւնը յաջողեցաւ մեծ համբաւ արձանագրել ազրպէյճանական ոչ-քաղաքական եւ ոչ-կրօնական շրջանակներուն մէջ: Այսպիսով վերջին տարիներու ընթացքին կազմակերպութեան գործունէութիւնը՝ մանաւանդ լրատուամիջոցներով ազրպէյճանական կառավարութիւնը քննադատելու արարքը սաստիկ վիճելի նիւթ դարձաւ Թեհրանի եւ Պաքու միջեւ:

«Հիւսէյնիյուն» կազմակերպութեան կեդրոնը Թեհրանի մէջ է, որ զօրաւոր կերպով կը քննադատէ Ազրպէյճանի վարչակարգը Իսրայէլի հետ սերտ յարաբերութիւններ մշակելու յանցանքով: Ան նոյնիսկ յառաջ կ'երթայ առաջարկելով Ազրպէյճանի մէջ իշխանութեան փոփոխութիւն: Ազրպէյճան այս կազմակերպութեան գործունէութիւնը սպառնալիք կը նկատէ երկրին ապահովութեան դէմ ու կը պահանջէ Թեհրանէն, որ արտայանձնէ անոր փախստական անդամները: Վերջին տարիներուն Ազրպէյճանի իշխանութիւնները յաջողած են երկրին մէջ «Հիւսէյնիյուն» կազմակերպութեան վեց անդամներ ձերբակալել ու բանտարկել:

Թէպէտ «Հիւսէյնիյուն» կազմակերպութիւնը ճանչուած է իբրեւ զինեալ խումբ մը, անոր ղեկավարութիւնը կ'ըսէ թէ ան ունի մշակութային ինքնութիւն եւ մեղմ վարուելակերպ բոլորին հետ: Ղեկավարութիւնը կը հաւատայ որ միայն զինեալ ուժի կիրառումը օգտակար չի կրնար ըլլալ, այլ հարկաւոր է ժողովուրդին մէջ հանրային արթնութիւն յառաջ բերել: Ազրպէյճանի իշխանութիւնները երկար ժամանակէ ի վեր հետամուտ են ժողովուրդը տգէտ պահել՝ զրկելով զայն տեղական եւ միջազգային լուրերէն եւ անհաղորդ պահել նշոյլ մը իսկ արթնութեան իրականութենէն, կ'ըսեն կազմակերպութեան ղեկավարները: Անոնք կը յառաջադրեն որ աւելի լայն չափով մշակութային շարժում մը ծաւալի եւ ժողովուրդը արթնութեան բերէ:

Թէպէտ «Հիւսէյնիյուն» կազմակերպութիւնը հիմնուած է իսլամ կրօնքի շիա յարանուանութեան փիլիսոփայութեան վրայ, սակայն անոր ղեկավարութիւնը կրօնքը միակ միջոց չի նկատէր ժողովուրդը արթնութեան հրաւիրելու եւ մեղմ վարուելակերպ մը կիրառելով շրջապատին հետ, կը փորձէ հասնելու հիմնական եւ յեղափոխական փոփոխութեան Ազրպէյճանի մէջ: Անոնք հետամուտ են ժողովուրդին ուսուցանելու պատմական իրողութիւններ ինչպէս՝ Իրանի եւ Ազրպէյճանի միջեւ պատմական յարաբերութիւնները ընդգծել ու չքաւականանալ միայն կրօնական ազդակով: «Հիւսէյնիյուն» կազմակերպութեան ղեկավարութիւնն ու անդամները այլ կազմակերպութիւններէ կը տարբերին անով, որ անոնց կրթութիւնը տարբեր է միւսներէն: Գոյութիւն ունին զանազան երկիրներու մէջ ուսում ստացած ղեկավարներ, ինչպէս Իրանի եւ Ռուսաստանի համալսարաններու մէջ: Անոնք դարձած են հմուտ, յառաջադէմ եւ փորձագէտ մարդիկ, ինչպէս նաեւ զանազան լեզուներու գիտակ՝ ռուսերէն, թրքերէն, ազրպէյճանի բարբառ, պարսկերէն, աֆղանիստանի բարբառ եւ ուրտու:

Լրագրող եւ վերլուծաբան Փէյմըն Ասատգատէ (Ռուստրական վկայական ստացած՝ Քաղաքական Գիտութիւններու գծով Հարվըրտի Քենետի Դպրոցի Միջին Արեւելեան Բաժանմունքէն, մանագիտութիւնը՝ Միջին Արեւելքի եւ Հարաւային Կովկասի Զարգացումները) կ'ըսէ, թէ «Հիւսէյնիյուն» կազմակերպութեան Միջին Արեւելքի եւ Կովկասի



մէջ տարածման խթան դարձաւ ամերիկեան յարձակումը Իրաքի վրայ եւ «Արաբական զարուն»ը զանազան արաբական երկիրներու մէջ, որոնց կառավարական համկարգերը սկարացան եւ տեղի տուին օտարերկրեայ կազմակերպութիւններու հոն մուտք գործելուն եւ ընդլայնուելուն: Սակայն Ազրպէյճանի մէջ այսպիսի կացութիւն մը չգոյացաւ, «Հիւսէյնիյուն» կազմակերպութեան առջեւ արգելքներ դրուեցան եւ ան մարտահրաւերներ դիմակալեց: Ասոր վրայ բարդուեցաւ Արցախի գրաւումը, որ Ալիեւի համբաւ շնորհեց իբրեւ «յաղթական» ղեկավար, հակառակ այն իրողութեան որ ան անկէ քիչ առաջ միայն վատահամբաւ մէկը դարձած էր փտածութեան համար:

Սակայն այս կազմակերպութիւնը նեղութիւն կը կրէ նաեւ կարգ մը իրանցի պատասխանատուներէ, որոնք վերջերս Ազրպէյճանի ուշագրաւ յայտարարութենէ ետք՝ թէ կազմակերպութիւնը սպառնալիք է վարչակարգին, ձերբակալած էին «Հիւսէյնիյուն»ի երկու ղեկավարներ՝ Թոհիտ Իպրահիմ Պայլին եւ Օրխան Սամատովը ու զանոնք շարաթ մը բանտը պահել: Այս արարքին դէմ բողոքով հանդէս եկած էին իրանցի ակնաւոր կրօնականներ ու քաղաքական մարդիկ: Լրագրող Փէյմըն Ասատգատէ կ'աւելցնէ, թէ «Հիւսէյնիյուն» կազմակերպութեան երկու ղեկավարներու բանտարկութիւնը զարմանալի չէր, եթէ նկատի ունենանք Իրանի տնտեսական սերտ կապերը Ազրպէյճանի հետ: Իրան այս հարցին հետ շատ զգոյշ եւ նուրբ կը վարուի, որովհետեւ «Հիւսէյնիյուն» կազմակերպութեան նեցուկ կանգնելով ան պիտի մղէ Ազրպէյճանը աւելի ու աւելի մօտենալու Իսրայէլի՝ վասն իր ապահովութեան եւ վարչակարգի գոյատեւման:

Սակայն եւ այնպէս «Հիւսէյնիյուն» կազմակերպութեան ղեկավարները աւելի քան հաստատ են իրենց որոշումներուն եւ սկզբունքային դիրքին վրայ, յոյս ունենալով որ երկար ժամանակաշրջանի ընթացքին է որ կարելի պիտի դառնայ տապալել Ազրպէյճանի ներկայ վարչակարգը եւ հաստատել նոր մը, որ իր յարաբերութիւնները բոլորվին պիտի խզէ Իսրայէլի հետ:

Իսրայէլի Ազրպէյճանի մէջ ռազմականօրէն եւ այլ ձեւերով խարսխելու պարագան եւ բոլոր վերոյիշեալ իրողութիւններու ուսումնասիրութիւնը ցոյց կու տան, որ Իրան Ազրպէյճանէն եւ մանաւանդ Իսրայէլէն աւելի յետընթաց դիրքի վրայ է: Այս երեւոյթը կը բացատրուի այն իրողութեամբ, թէ երկրագունդի վրայ գոյութիւն ունի անտեսանելի ուժ մը, որ կը ձգտի աշխարհի գրաւման եւ մարդկութիւնը իրեն ենթարկելու մտադրութեամբ յարատեւ հանգրուանային գործունէութեան: Այս ուժը բացարձակապէս չարին ծառայ է, որովհետեւ անոր գործունէութիւնը կը կատարուի մարդկութեան մէջ հարցեր յարուցանելով եւ այդպէսով իրեն ենթարկելով, իրար միջեւ հակամարտող ուժերուն այնպէս գործել տալով, որ հակամարտութեանց հանգրուաններու ընթացքին կարելի եղած չափով առաւելագոյնս մարդ արարածներու մահ պատճառուի, միշտ նպատակ ունենալով հակակշռի տակ առնել երկրագունդի բնակչութեան թիւը: Որոշ հակամարտութեան մը տեւողութիւնը կ'երկարեցնուի, որպէսզի կարելի ըլլայ առեւելագոյն թիւով մարդկային հոգիներ խլել: Կրակը դադրեցնելու ժողովներ կը գումարուին, սակայն համաձայնող երկու կողմերն ալ չեն յարգեր իրենց խոստումը, հրահանգուած ըլլալով այս գաղտնի ուժէն:

Յարդ այս ուժը նորարարութիւններ բերելու եւ գիտութեան զարգացումը մարդուն ծառայեցնելու պատրուակով՝ գործադրութեան ճամբու մէջ դրաւ համաշխարհայնացումը՝ բջիջային հեռաձայններու եւ համակարգիչ սարքերու անհրաժեշտութիւնը առօրեայ կեանքին մէջ պարտադրելով, որոնց միջոցաւ արդէն իսկ գրեթէ ամէն ոք որ կ'ապրի երկրագունդի վրայ համարակալուած է եւ անոր բոլոր շարժումները հսկողութեան տակ առնուած են: Կայ նաեւ ազգային եւ մարդկային վսեմ արժէքներու վերացում, միասեռականութեան քաջալերանք-տարածում եւ անհատի իր սեփական սեռը ընտրելու ազատութիւն կոչուած անմարդկայնութիւն, թմրամոլութիւն, եւայլն: Արդէն ականատես եւ ենթակայ կ'ըլլանք համաճարակներու, որոնք բաւական թիւով մարդկային հոգիներ խլեցին:

Ու տակաւին կան զանազան տեսակի աղէտներ՝ ներառեալ բնական կարծուածները, որոնք պիտի տեսնենք, որովհետեւ անոնց մասին չարին տուած ահեցնող «խոստումէն» բացի յաւիտեան կայ ու կը մնայ Ճշմարիտ Աստուծոյ զգուշացման խօսքը, մարգարէներու եւ սուրբ առաքեալներու բերնով:

Վերադառնալով մեր նիւթին եզրակացնենք, թէ Ազրպէյճան ու Իսրայէլ պիտի շարունակեն կատարել այն ինչ որ միջազգային այդ ուժը իրենց կը հրահանգէ եւ Իրան պիտի փորձէ այդ հրահանգները չէզոքացնել, ինչքան որ հնարաւոր է:


(ԻՐ ԴԻՄԱՏԵՏՏԻ ԷՋԷՆ)

AI-Ի ԴԱՐՈՒՆ՝ ԹՈՒԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ ԸՆԴԴԷՍ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԴԱՐՈՒՆ



ԱՐԱՅԻԿ ՄԿՐՏՈՒՄԵԱՆ

21/10/ 2024



Ազգային ինքնութիւններու մասին խօսելու ատեն, մենք պէտք է նաեւ ուշադրութիւն դարձնենք կարեւոր, բայց առայժմ չշօշափուող հարցի մը՝ թուային միջավայրին: Ներկայիս, թուային միջավայրը դարձած է մարդու առօրեային անբաժանելի մէկ մասը՝ ուժեղագոյն ազդեցութեամբ եւ ներկայութեամբ: Այս երեւոյթը կարեւոր է ոչ միայն բարոյախօսական, միջանձնային շփման եւ

այլ տեսանկիւններէ, այլեւ ազգային ինքնութեան ընկալման դիտանկիւնէն: Խնդրայարոյց է այն, որ, ըստ էութեան չհասկնալով, թէ ինչ է ինքնութիւնը եւ անոր ուղղուած բազմաթիւ կիսատ-պռատ մեկնաբանութիւններով «ենթադրեալ ինքնութիւն» բացայայտելու փորձերու արանքին կայ սովորական մարդու թուային միջավայրը, ուր ան կը վերափոխուի անդառնալիօրէն եւ այդ թուային միջավայրը կ'ազդէ նաեւ անոր՝ ոչ միայն իր անձին ու հոգեբանութեան, այլեւ ազգային ինքնութեան ընկալման վրայ: AI-ի մուտքը մեր կեանքէն ներս բազմաթիւ հարցեր կը յառաջացնէ եւ այդ հարցերը պատասխաններ կը պահանջեն:

AI-ի մուտքը մարդկային կեանքէն ներս ոչ միայն փոխած է եւ կը շարունակէ փոխել մեր սեփական անձին ընկալման չափանիշները, այլեւ ընդհանուր հասարակական հասկացողութիւնները: Երեւակայեցէք, երբ մարդը չի գիտեր, թէ ինք ով է, ապա ինչպէ՞ս կրնայ հասկնալ թէ ի՞նչ կը ներկայացնէ իր պատկանած հասարակութիւնը, ազգը կամ նուազագոյնը՝ խումբը: Ընդ որում, եթէ մարդը ինքնարտայայտութեան հարց ունի որպէս ընկերային արարած, երբ ան ձեռով մը փորձ կը կատարէ լուծելու իր սեռային, զգացական, մտաւորական խնդիրները, որոնք հոգեբանութեան եւ փիլիսոփայութեան բազմաթիւ տեսութիւններու քննարկման առարկայ են, ապա ինչպէ՞ս ան պիտի վերաբերի իր էթնիք պատկանելիութեան հետ:

AI-ը չունի ազգութիւն, կրօնական կամ բարոյական որեւէ չափանիշ: AI-ի բազմաթիւ գործիքներ տակաւին զերծ կը մնան բռնութեան, սեռային եւ այլ տեսարաններ նկարագրելէ



կամ պատկերացնել (թէեւ կան նաեւ չգրաքննուած AI գործիքներ), բայց անոնք պայմանաւորուած են միայն տուեալ երկրին օրէնքով, այլ ոչ թէ ազգային առանձնայատկութիւններով: Ազգութիւն չունեցող AI-ը համահարթ ու համահասարակընդունի բոլոր ազգութիւններն ու կրօնները՝ իւրայատուկ էսփերանթօ մը (Միջազգային լեզու մը ստեղծուած Լուսովիկ Չամենհոֆի կողմէ 1887-ին՝ իբրեւ դիրքին ուսուցում, հաղորդակցութեան չէզոք լեզու մը տարբեր ազգերու միջեւ) նաեւ էթնիք միջավայրի համար:

Ինչպէ՞ս պիտի դրսեւորուի «ազգայինը» թուային միջավայրի մէջ: Աստիճանաբար թուային միջավայրին մէջ կլանուող մարդը ինչպէ՞ս պիտի վերաբերի իր էթնիք ընկալումին: Մինչեւ հիմա, էթնիք առանձնայատկութիւնները բնորոշուած են լեզու-կրօն-տարածք-միջավայր եւ մշակութային այլ առանձնայատկութիւններով: Էթնիք ընկալումները դիտարկուած են որպէս տուեալ էթնոսի քաղաքակրթական ձեռքբերումներուն հիման վրա ստեղծուած աշխարհայացքներ, իսկ ա՛յժմ: Ինչպէ՞ս պիտի տարբերակուին «նոր ձեռքբերումները»: Ինչո՞վ հայր առանձնացնել ֆրանսացիէն:

Անգլիացի գրող Օլտես Հաքսլի, խօսելով ժամանցի եւ հաճոյքի մասին, կը նշէ, որ նախորդ դարերուն ժամանց ու հաճոյք ըսուածը որոշ չափով մտային աշխատանք կ'ենթադրէր՝ ներկայացումներ, օբերա, առակներ, տօնական ծիսակատարութիւններ եւ այլն, ֆիզիքական եւ մտաւորական որոշակի միջավայր ունէին, մտային որոշակի ունակութիւններ կը պահանջէին եւ արուեստը արուեստ կը նկատուէր, երբ զայն հասկնալու համար մարդը հոգեկան եւ մտային ջանք պէտք էր գործադրէր՝ պարզն ու բարդը տարբերելու համար, իսկ հետագային մարդոց հրամցուեցան նորութիւններու թերթեր, շո-պիզնէս ու սինեմա, ռատիօ, որ արդէն որեւէ ճիգ չէր պահանջէր: Մարդիկ կրնային ժամերով պաստառին նայիլ ու չմտածել:

Հիմա վիճակը աւելի սրած է: AI-ի պարագային, մենք ունինք ոչ թէ պարզ ապրանք մը, այլ ՈՉ ՈՔԻ կողմէ ստեղծուող ապրանք մը: Ապրանք մը, որ կը ստեղծուի անձնական, էթնիք, կրօնական, տարածքային ինքնութիւն չունեցող ակտորիթմի մը կողմէ: Անոր համար ամէն ինչ միեւնոյնն է: Ազգային ինքնութիւնը որպէս քաղաքակրթական ձեռքբերում՝ մարդուն եւ անոր պատկանած խումբին դարերու պայքարն ու սեփական սխալներու, ձեռքբերումներու փորձն է: Անիկա իրլանտացիին կ'առանձնացնէ չինացիէն: Արուեստական բանականութեան պարագային, այդ բոլորը կը վերանան: Անիկա կրնայ ստեղծել իրավիճակ մը, միջավայր մը, որեւէ բան, ուր տարբեր ազգերու, կրօններու ներկայացուցիչներ կը դառնան միանման ու համահասարակ, համահարթ: Հոն կը վերանան բոլոր իւրայատկութիւնները: Հոն անհատ մարդը ոչ միայն կը կորսնցնէ իր եզակիութիւնը, այլեւ իր ազգային ինքնութիւնը:

Օրը օրին ռոպոթացող եւ մտաւորական ընդունակութիւններ չպահանջող թուային միջավայրին մէջ, մարդ արարածը ինչպէ՞ս պիտի ընկալէ ինքզինքն եւ իր ազգութիւնը: Ի՞նչ առանձնայատկութիւններ ձեռք պիտի բերէ եւ ի՞նչ պիտի կորսնցնէ: Ի՞նչ նորութիւններ պիտի արձանագրէ, ի՞նչ փոփոխութիւններ ձեռք պիտի բերելէ մարդը եւ ինչէ՞ պիտի հրաժարի: Արժէքային այն փոփոխութիւնները, որ տեղի կ'ունենան մարդուն մէջ արուեստական բանականութեան (AI) հետեւանքով, ինչպէ՞ս պիտի ազդեն անոր էթնիք դատողութեան ու գիտակցութեան վրայ: Էթնիք արժէքները, որոնք դարերով ձեռք բերուած քաղաքակրթական հետեւութիւններ են, այժմ առճակատման մէջ կը գտնուին



վայրկեաններու մէջ ստեղծուող նկարներու, երաժշտութեան, երգի հետ: Հայուն համար որքանո՞վ Կոմիտասը պիտի շարունակէ արժէք ներկայացնել:

AI-ը, մրցելով մարդուն հետ, զայն կը զրկէ ստեղծարարութեան եզակիութենէն. մարդը, որ միակն էր մոլորակին վրայ իր ճանչնալու եւ գիտակցելու, գնահատելու եւ մեկնաբանելու կարողութեամբ՝ այլեւս առանձին չէ: Իրեն հետ կը մրցի իր իսկ ստեղծած AI-ը, որ միջին մարդէն հարիւրաւոր անգամ աւելի տեղեկացուած է ու արագ: Արդեօք մարդը պիտի դիմանայ այս մրցակցութեան: Արդեօք մարդը պիտի շարունակէ՞ հաւատալ արժէքներու, ինչպէս՝ ազգ, հայրենիք, բարոյականութիւն, աստուած: Արդեօք մարդը ինքզինք թուայնացնելով՝ չ'այլասերէ՞ր իր գիտակցութիւնը ոչ միայն որպէս մարդ, այլ որպէս էթնիք ներկայացուցիչ: Որքանո՞վ հայուն համար հայ ըլլալը պիտի մնայ սեփական առանձնայատկութիւն, էթէ ամէն օր իր դիրքերը ամրապնդող AI-ին համար ազգային առանձնայատկութիւնը որեւէ նշանակութիւն չունի: Եւ այս բոլորին հետեւանքով թուայնացող ինքնութիւնը արդեօք պատրաստ պիտի ըլլայ պայքարելու իր ազգային իրաւունքներուն եւ արժէքներուն համար, ինչպէս նախապէս կ'ընէր: Ազգային գաղափարախօսութիւնները, ազգային նպատակները, հայեցակարգը, լեզուական նրբութիւնները, արուեստի ու մշակոյթի էթնիք ձեռքբերումները ոչինչի կը վերածուին թուային միջավայրին մէջ, ուր կը ձեւաւորուի ինքնութեան նոր տեսակ մը, որ չունի ազգային կամ կրօնական, ցեղային ու լեզուական եզակիութիւն: Այլեւս չկան բարձր ու ցած մշակոյթներ, կայ քանի մը վայրկեանի մէջ վերարտադրուող նորութիւն մը, որ նաեւ կրնայ եզակի թուիլ: Արդեօք այս պարագային սեփական պատմութիւնը պիտի շարունակուի՞ նկատուիլ ազգային ճակատագրի շարունակուող փուլ եւ համաշխարհայնացումը ի վերջոյ մարդը պիտի չմիաւորէ՞ մէկ ընդհանուր թուայնացած «հայրենիքի» մը մէջ որպէս մէկ միասնական թուայնացած էթնոս:

Երբ ուշադրութիւն դարձնենք գիտաբերականայական ֆիլմերուն, ուր հակաիթոպիթ ապագայի մը մէջ, մարդը կը հակադրուի ռոպոթին կամ ակտրիթմին, ապա կը նկատենք, որ այդ ֆիլմերուն ու գիրքերուն մէջ մարդու էթնիք, ազգային կրօնական, լեզուական առանձնայատկութիւնները մէկ կողմ դրուած են: Անոնք այլեւս չկան: Մարդը արդէն տեսակ մը կռիւ կը մղէ, մարդը կորսնցուցած է իր բազմաշերտ առանձնայատկութիւնները եւ այժմ բանականութիւնը կը պայքարի բանականութեան դէմ: Նկատի առնելով թեքնաբանական զարգացումները եւ արագութեան կարելորութիւնը, ապա մարդը հաւանաբար կորսնցնէ հմտութիւններու պատերազմը:

Եթէ ապագային AI-ը մարդասիրական «իրաւունքներէ» ելլելով մեզի պարտադրէ հրաժարիլ ազգային առանձնայատկութիւններէ՝ զանոնք համարելով անընդունելի դասակարգում, ապա որքան ամուր կ'ըլլայ ազգային մեր ինքնագիտակցութիւնը, երբ մենք հոգիով ու մտքով կ'ապրինք թուային միջավայրի մէջ: Որքան արագ մենք կը հրաժարինք մեր կրօնական, մշակութային եւ ի վերջոյ ազգային ինքնութիւններէն: Եւ այդ պարագային, ի՞նչ կամ ո՞վ կը դառնանք մենք: Եթէ մարդը ինքն իրմով ընկերային արարած է եւ որպէս տարբերակիչ նշան այլ մարդոցմէ՝ ունի սեփական անունը, խմբային, ազգային պատկանելութիւնը, ապա ի՞նչ պիտի ըլլայ մարդուն ապագայի տարբերակիչ նշանը, էթէ այդ պիտի չըլլայ իր լեզուական, կրօնական ու ազգային առանձնայատկութիւնները: Ու ի՞նչ կը պատահի հայոց պատմութեան ու ազգային նպատակներուն: Անոնք կը վերափոխուին որպէս թուային, արուեստական առանձնայատկութիւններու, թէ՞ կ'արխիւացուին թուային աղբանոցին մէջ որպէս մարդկութեան պատմութեան անցեալի մէկ այլ երանգը, որ կ'ըլլայ պարզապէս արձանագրուած ու արդէն ոչ կիրառելի փաստ:

ՏԵՍԱԿԷՏ

ՊԱՀԱՆՋԱՏԷՐՆ ԵՄ ՊԱՊԵՐԻՍ ԵՐԿՐԻ



Շուրջ 100 տարի հայոց ցեղասպանութեան, պահանջատիրութեան թեման շօշափելը թուրքի համար տաբու է եղել և աստոմային ռուսի դեր է կատարել, զսպաշապիկ է հանդիսացել, և թուրքը զերծ է մնացել Հայաստանի վրայ յարձակուելու մտքից: Թուրքը 100 տարի միշտ ձգտել է իր ճակատից մաքրի ցեղասպանի խարանը. միլիոնաւոր դոլարներ է ծախսել, օգտագործել է հրեական լոբբին, որ ԱՄՆ կոնգրեսում վիժեցնեն Հայոց ցեղասպանութիւնը դատապարտող բանաձեւերը... կամ աշխարհի տարբեր խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչումն ու դատապարտումը թուրքիան սուիներով է ընդունել... միշտ պնդել է, որ ցեղասպանութիւն չի եղել, եղել է տեղահանում պատերազմական

վիճակից ելնելով...

Հիմա ի՞նչ է դուրս է գալիս, որ մենք նոյնպէ՛ս հաստատում ենք այդ թեզը... 44 օրեայ պատերազմից յետոյ Պուտինին լսելով, ասացինք Հայկական Արցախը մերը չէ, տուեցինք ադրբեջանին... հիմա հրաժարում էք Արարատ սարից, որը վիզը ծռած որբի նման իր տէրերին է սպասում, որ իրեն ազատագրեն... հերթը հասաւ Արարատ կոնտակին, Թուրքին մնայ իրենց Հայաստանը պէտք է առանց հայերի, դրա համար էլ Ալիեւն ասում է Էրեւանը, Սեւանը, Սիւնիքը մերն է... տալով ու՛ր կը հասնենք... Մենք մեր շանսը ձեռից բաց ենք թողնում, հրաժարուելով ԱՄՆ-28-րդ նախագահ Վուդրօ Թովմաս Վիլսոնի նախաձեռնութեամբ 18 պետութիւնների կողմից ԱՄՆ-ը մեծ կնիքով վաւերացրած «ԻՐԱԻԱՐԱՐ ՎՃՌԻՑ», որը վաղեմութեան ժամկետ չունի, փոխանակ Արեւմտեան Հայաստանի ՎԻԼՍՈՆԵԱՆ ՔԱՐՏԷԶԻՆ ՏԷՐ ԿԱՆԳՆԵՆՔ, դատական գործընթաց սկսենք, այնպիսի յաղթաթուղթ ինչպիսիք են Սեւրի դաշնագրը և ՎՈՒԴԴՐՕ ՎԻԼՍՈՆԻ իրաւարար վճիռը, որտեղ ամրագրուած են մեր իրաւունքները Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթների վրայ՝ ընդհանուր առմամբ 103, 599 քառ. կմ:

Միջազգային իրաւունքը, մասնաւորապէս Հաագայի կոնվենցիայի (1907 թ.) 81-րդ յօդուածը, որով ամփոփուել և ամրագրուել է Իրաւարար վճիռների կարգավիճակը, ընդհանրապէս չի նախատեսում վճռի չեղեալ յայտարարում", ուստի այն չունի վաղեմութեան ժամկետ, այսօր էլ ուժի մէջ է այնքան, ինչքան ընդունման պահին:

"Իրաւարար վճռի" վերնագիրն է.

«Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի դէպի ծով ելքի եւ հայկական սահմանին յարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերեալ»

Կան բոլոր հիմքերն ու ճանապարհները, որ լինենք հետեւողական, օգտագործենք ամբողջ դիւանագիտական ներուժը, քննարկենք ինչպէս "Սեւրի դաշնագրի" դրոյթները, այնպէս էլ 1920թ. նոյեմբերի 22-ին 18 պետութիւնների կողմից հաստատուած, Ամերիկայի միացեալ



Նահանգների 28-րդ նախագահ Վուդրո Թոմաս Վիլսոնի կողմից ԱՄՆ մեծ կնիքով վաւերացուած "Իրաւարար վճիռը" կեանքի կոչելու, վերահաստատելու Հայաստանին յատկացուած տարածքների վրայ մեր տիտղոսն ու իրաւունքները: Հայաստանը լինելով Մ.Ա.Կ.-ի լիիրաւ անդամ, օգտուելով իրեն վերապահուած իրաւունքներից, Մ.Ա.Կ.-ի միջազգային դատարանի միջոցով (Միջազգային դատարանի կանոնադրութեան 36-րդ յօդուածի 2 կետի ա/ և բ/ ենթակէտերի հիման վրայ) հաւաստել Վիլսոնի իրաւարար վճռի վաւերականութիւնը և դրանով իսկ վերահաստատել տիտղոսը Հայաստանին յատկացուած տարածքների վրայ:

Փաշինեան ջան, այդքան տարիներ մենք ի զուրէն ենք պայքարել մեր ծովից -ծով Հայաստանից մեզ օրէնքով յատկացուած Վիլսոնեան Քարտէզի մի փոքրիկ տարածքի՝ 4 վիլայէթների վրայ հաստատելու մեր տիտղոսն ու իրաւունքները... որի ճանապարհները տանում են ՀԱԱԳԱՅԻ միջազգային դատարան... Արցախը տուեցինք, հիմա Արևմտեան Հայաստանի՞ց էք հրաժարոււմ, մեր 1,5 միլիոն նահատակները մեզ չեն ների... մտահոգութիւն ունեւ, կարո՞ղ է շատ նեղեն Սիւնիքն էլ տաք և այս մի բուռ հողակտորից էլ հրաժարուէք...ընդամենը մի փոքր հացի համար պէտք չէ մեր պահանջատիրութիւնից հրաժարուէք,, աշխարհի պետութիւնները, ովքեր իրենց խորհրդարանում ճանաչել են Հայոց ցեղասպանութիւնը, կամ Բայդէնը ասելու են<ուրեմն դուք մերժում էք ցեղասպանութեան փաստը> , բա ինչու՞ մեզ թուրքերի հետ թշնամացրեցիք... մեզ զրպարտիչ կ'որակեն... այն, որ մենք թուրքին դատարան քաշ չենք տուել, վաղը Էրդոհանն ինքը մեզ դատի կը տայ որպէս զրպարտիչի և մեծ գումարներ կը պահանջի, իսկ այդպէս էլ մեր գերի ընկած սահմանները չեն բացուի:

Սա ծուղակ էր Պուտինի կողմից, երբ 44 օրեայ պատերազմից յետոյ Մեղրու միջանցքի հարցը հանեց ասպարէզ, մերժում ստացաւ մեր իշխանութիւնների կողմից, մէջտեղ բերեց Թուրքիայի հետ հաշտուելու հարցը, յոյսով որ խորամանկ Էրդոհանը մուկ ու կատու կը խաղայ մեզ հետ և կը ստանայ Մեղրին...

Էրդոհանը տեսաւ ինչ ուզում են տալիս ենք, հիմա այդ ուղղութեամբ է աշխատում... դեռ ուզում ենք թուրքի դիւանագիտութեան հետ ո՞տ գցել.արքայ...Դիւանագիտութիւնը բարդ գիտութիւն է ու ամէն մարդու հասու չէ...

Հմուտ դիւանագէտն անգամ պատերազմում պարտութեան տակից յաղթանակած դուրս կը գայ, իսկ տգէտ դիւանագէտը յաղթանակները պարտութեան կը տանի... Գաղթականի ընտանիքում եւ մեծացել, տատիս արցունքները դեռ աչքիս առաջ է, նրա ընտանիքին մարագներում այրած նրա ընտանիքի խորոված մսի հոտը դեռ շնչում եմ, տատս օրուայ բոլոր ժամերին էր պատմում, անգամ ճաշի ժամին, մեր կերած հացն արցունք է եղել ու այդ արցունքից տասնեակներով հայրենասիրական բանաստեղծութիւններ եմ հիւսել...Հիմա իմ երագանքները, ջանքերը պապերիս երկրի ազատագրման համար, որի համար իմ գիտակցական կեանքս եմ մաշել, ոչ ոք չի կարող ջնջել,, Ես չեմ ասում պատերազմել թուրքի հետ.արդէն ասացի ինչպէս կարելի է հասնել պատմական արդարութեան վերականգմանը...

Երբ Էրդոհանը Պուտինից պահանջում է Դրիմը, ասելով, որ իր նախնիներին է պատկանում, մենք ինչու՞ պէտք է հրաժարուէնք մեզ պատկանող մեր նախնիների հողերից...

Պահանջատէրն եւ պապերիս երկրի, ոչ առաջինն եւ ու ոչ էլ վերջին, թէկուզ լինի այն կեանքում ես էի պահանջատէր եւ,, ԱՀԱԻՈՐ ԹԵԻԱԹԱՓ ԵՄ,,

ՍՈՆԱ ԱՐՇՈՒՆԵՅԻ

11/11/2024 (Իր Դիմատետրի Էջէն)

ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՈՐՆ Է «ԵՐԿԻՐ ԴՐԱԽՏԱՎԱՅՐԸ».

ՀԱՅԱՍՏԱՆԸ, ԱՄԵՐԻԿԱՆ ԹԷ՞ ԾՆՆԴԱՎԱՅՐԸ

Պարոյր Յ. Աղպաշեան



Վերջին տարիներուն, ապահովական անկայունութիւնները, քաղաքական վերիվայրումները, ճակատային տեղաշարժերը եւ ընդհանրապէս խաղաղութեան բազմատեսակ խախտումներն ու խանգարումները, աշխարհը կլանած են իրենց ահագնութեամբ ու բռնկութեամբ, վայրագութեամբ ու բարբարոսութեամբ:

Զսպող ուժ փնտռելը ցնորք է, զգաստացնող կողմ վկայակոչելը պատրանք է, օգնութիւն

խնդրելը իմաստագործ է, որովհետեւ այդպիսի ո՛չ միջոց, ո՛չ կարելիութիւն, ո՛չ ալ հնարք կայ, այնքան որ՝ տմարդական զգացումներն ու վերաբերմունքները համատարած են, իրենց դաժանութեամբ, ապերախտութեամբ եւ անմարդկայնութեամբ:

Աւելի քան պարզ եւ աչքառու է, որ պատերազմիկ հոգեբանութիւնը, հակամարդկային մոլուցքը, բռնագրոսիկ հաշուեյարդարութիւնը, ջարդարարութեան մաղձալիութիւնը, կը մնան բարձրագոյն անասնութեան մակարդակներու վրայ, նորանոր ու շարունակուող զարգացումներու հաւանականութիւններով:

Այս բոլորը կատարուած են (ու կը կատարուին) քանի մը տասնեակ տարիներէ ի վեր, սակայն, կարելի չեղաւ «դարման» մը գտնել, վերջ տալու այս ոճրային արարքներուն, այնքան ատեն որ՝ անոնք դարձած են ընթացիկ իրենց յամբընթաց, բայց, տխուր հետեւանքներով:

Անտարակոյս, այս անբնական եւ արտառոց կացութիւնը, իր զանազան ու տարաբնոյթ ելեւէջներով, պատճառ դարձած է, որ յատկապէս «տաք» շրջաններու բնակիչները, կամայ թէ ակամայ, իրենց կեցութեան վայրերը փոխեն, արտագաղթային թէ տեղափոխային շարժերով:

Այս պարտադրողական տեղաշարժերը, տեղ մը անխուսափելի, ուրիշ տեղ մը՝ ստիպողական էին, որովհետեւ, ի դէմս նուաճողական եւ յարձակողական փորձերուն, շատ յաճախ, ոմանք այլ ընտրանք չէին գտներ, յանուն իրենց եւ իրենց ընտանիքներուն անվտանգութեան:

Այդուհանդերձ, անապահովութեան եւ անկայունութեան տարափները կը շարունակուէին, կը վերանորոգուէին ու կը վերակենդանանային, թոյն ու գոյժ սփռելով ամենուրեք, ցաւ ու խոց տարածելով բոլորին, աւեր ու աղէտ ցանելով հոս ու հոն:

Իսկ երկրագունդի բնակչութիւնը, ի մասնաւորի անոնք որոնք, մերթ ընդ մերթ կ'ենթարկուէին նման ցնցումներու ու տեղաշարժերու, իրենց կրած զոհերով, քանդումներով, ու տեղահանութիւններով, ոչ միայն ողբերգութիւններ կ'ապրէին, այլեւ՝ եղերերգութիւն, կը փորձէին ինքնապաշտպանուիլ (անշուշտ, ոչ զինամթերքով), իրենց կեանքը փրկելու, տէր կանգնելու իրենց ինքնութեան եւ իրաւունքներուն, հաւատալով որ իրենց կեցութիւնը կը նշանաւորուի ու կը յատկանշուի, մնալով կառչած իրենց արմատներուն, թէկուզ, իրենց ենթարկուած դառն ճակատագիրին:



Այս իրադարձութիւնները, իրենց դրական թէ ժխտական առումներով, մեզ կը մղեն բարձրաձայնելու, մտորելու թէ խորհրդածելու, անդրադառնալով այն երեւոյթներուն, որոնք մեր ամենօրեայ մտահոգութիւններն ու մարտահրաւերներն են, ինչպէ՞ս դիմագրաւել կամ յաղթահարել արուեստական դժուարութիւնները եւ ընթացիկ անակնկալները:

Թէ՛ դժուարութիւնները, թէ՛ անակնկալները ոչ ոքի համար նորութիւն են, որոնք տարիներէ ի վեր կան ու ժողովուրդին համար անծանօթ չեն, նկատի ունենալով քաղաքական տագնապները, տնտեսական անկումները եւ առ հասարակ այն պարագաները, որոնք կը ստեղծեն վանդակայան բուռն տրամադրութիւններ ու սրտնեղութիւններ:

Այս հակոտնեայ պայմանները, անշուշտ, հաշտ աչքով չեն դիտուիր, ոչ ալ համակերպելի կը դառնան, երբ կեանքը իր բնականոն ընթացքէն կը շեղի ու դուրս կու գայ իր սովորական ընթացքէն, երբեմն սպասելով այն պատեհ առիթին, ուր կիրքերը կը հանդարտին կամ կեանքը համարեա բնականոն հունի մէջ կը դեգերի, ինչ որ շատերուն համար կրնայ ստեղծել հանդարտութեան հոգեկան յառաջխաղացքներ:

Այսուհանդերձ, երբ կեանքը կը թեժանայ, մարդիկ կը չարանան, անհանդուրժողութիւնները կը կուտակուին, պայմանները կը սրին, անարդարութիւնները կը տիրապետեն, անիրաւութիւնները կը ճնշեն, ինչ որ, բնական ըլլալու չափ... անբնական սկսած են դառնալ, ամէն ոք չէ որ կրնայ յարմարիլ կամ ընտելանալ այդ հոսանքներուն, որոնք թունաւոր, վնասաբեր ու վտանգաւոր ըլլալու աստիճան կ'անհանգստացնեն մարդկութեան տարբեր խաւերն ու կը խանգարեն ուրիշներու ալ կենցաղային դրոյթները, յայնժամ կը դրսեւորուին ու կը խմորուին նոր պահանջներ ու կ'առաջանան անսովոր նիստուկացեր, ուստի, կը նշանակէ թէ անոնք միջավայրէն դուրս եկած են ու հետամուտ են նոր լիցքի ու մթնոլորտի:

Անշուշտ, նման պարագաներու, հասարակութեան բոլոր շերտերը չեն որ կը փոխեն իրենց գոյերթին եղանակը կամ նոյնիսկ կը յանդգնին նման քայլի դիմելու, որովհետեւ աստոնք դիւրին պիտի չըլլան, ոչ ալ յանկարծական, ի դէմս այն անհասանելիութեան եւ անկարելիութեան, որոնք կը ցցուին այդ տարրերուն առջեւ, դուր բանալով տարատեսակ հանգոյցներու անլուծելիութեան, քանի, մինչեւ նոր հորիզոններ «նուաճելու» համար, կան բազմաթիւ կամուրջներէ անցումներ կամ ոստումներ:

Մեր այս արձանագրութիւնները, իրենց վերլուծական հպանցիկութեամբ ու դիտարկութեամբ, կը միտին ցոյց տալ, որ կարգ մը շրջաններու եւ երկիրներու մէջ, ուր բիրտ ու բռնկող հանգրուաններէն անցած են (ու կ'անցնին), մեր յիշեալ նկարագրութիւններն ու տեղեկագրութիւնները յստակ կը դարձնեն, թէ տեղի ունեցող ցնցող իրավիճակները, ինչպէ՞ս կը պարտադրեն մարդկային տեղաշարժերու, զանգուածային ձեւափոխութիւններու կամ խմբային ելիցներու, պարզապէս իրենք զիրենք հեռու պահելու համար աղէտներէ, ճգնաժամերէ եւ օրհասութիւններէ, աստոնք սպառնալով իրենց անվտանգութեան, մարմնական, նիւթական, առեւտրական թէ աշխատանքային առումներով:

Ի հարկէ, այս տխուր ու ցաւցնող պատկերները, որոնք կը հարուածեն աջին ու ձախին, կարիքաւորին եւ ունեւորին, մեծին ու փոքրին, ոմանց այլընտրանքներ չէին ձգեր, երբեմն կարող եւ երբեմն ալ անկարող հատուածներու մօտ, ուղղուելու այլուր, նոր բախտ փնտրելու, կեցավայր ճարելու ու տարբեր սկիզբի մը ձգտելու, միշտ չէ որ աստոնք իրենց բարօրութիւնը կրնան գտնել, բայց, ստիպողականութիւնը, անհրաժեշտութիւնը ու փոփոխութիւնը այլ ելք չէին ձգեր:

Այս տուեալներէն ու գործօններէն մեկնելով եւ անոնց քննարկումները կատարելով, սակայն, առանց մեղադրելու կամ քննադատելու, ծննդավայր լքողները, փախչողները կամ ձգողները, ինչպէ՞ս կարելի է զանոնք արդարացնել ու պաշտպանել, երբ այդ տեղափոխութիւնները այլեւս դարձած են ԻՐՈՂԱԿԱՆ:



Հայկական տեսակետէն, եթէ կեդրոնանաք յատկապէս լիբանանահայ ու սուրիահայ համայնքներուն վրայ, որոնք դաժան ճակատագիրներու ենթարկուեցան, մարդկային եւ ունեցուածքային կորուստներով, ինքնին պարզ կը դառնայ, թէ այդ արտահոսքերը ինչն է տեղի ունեցան, առանց սակայն արդարացնելու բոլորը, որովհետեւ, շատեր նման «սեւ» ճակատագիրի չէին ենթարկուած բայց, անոնցմէ ոմանք Միջին Արեւելքը նկատած էին այլեւս... անբաղձալի, իսկ ուրիշներ նախընտրած են պճնասիրութեան առաւելութիւնները վայելելու գրաւչութիւնները:

Այս ձեւով, հայաթափութիւնը՝ լիբանանեան ու սուրիական ՄԱՅԸ գաղութներէն, ծնունդ առաւ, բազմացաւ, տարածուեցաւ, նոյնիսկ ընտանիքներ ջլատելով, հարազատներ բաժնելով, բարեկամներէ հեռանալով, կենսախինդ շրջանակներէ ու կազմակերպութիւններէ անջատուելով:

Ինչպէս ըսուեցաւ, այս նոր տեսակի հայկական գաղթերը (ոչ արտագաղթերը, ոչ ալ ներգաղթերը), մեզի յիշեցնել կու տան «ճամպուրկի, ձեռնափայտի եւ ուսապարկի» օրինակը, որ ՄԵԶԱՅԱՏՈՒԿ է (այսինքն՝ հայութեան), միշտ պատրաստ ըլլալով մէկ երկրէ ուրիշ մը, ընդհուպ, փոխադրուելու, ամէն անգամ որ՝ «որոտում» մը կ'ահագանգէ (Արեւմտեան Հայաստան-Կիլիկիա, Սուրիա, Լիբանան, Իրաք, Յորդանան, Յունաստան, Իրան, Էւայլն), միշտ պատրաստ՝ ճամպուրկը, ձեռնափայտը, ուսապարկը առնելու ու ցատկելու այլ տեղամաս, օր մըն ալ, հո՛ն յուղարկաւորուելով ու թաղուելով:

Այսօր, ասորը միւս երեսն ալ կայ. ներկայ հրաշագեղ Հայաստանը թողլքել ու չուել այլ հրապուրիչ (՞) ուստաններ:

Դարձեալ կը կրկնենք. մեկնողներուն մէջ կան բանաւոր ու համոզիչ պայմաններով թեկնածուներ, բայց, հայ ժողովուրդը մինչեւ ե՞րբ պիտի ապրի «գնչու»ական հոգեբանութեամբ ու թափառաշրջիկութեան զիկզակներով:

Արդէն, մեր հողային պատմական իրաւունքները կորսնցուցած ենք, այս կամ այն պատճառներով, այժմ Հայաստանն ու Արցախն ալ այդ Դամոկլեան սուրին (կամ եաթաղանի՞ն) առջեւ կը խլրտին, իսկ աշխարհատարած Սփիւոքը, որքան ալ ամրակոտ ու կանգուն, արդեօք իր գոյութեան երաշխիքները ո՞ր կը տեսնէ կամ կը գտնէ, եւ կամ՝ ինչպէ՞ս կրնայ պահել զանոնք:

Եթէ պահ մը յամենանք այն ազդակներուն վրայ, որոնք Սփիւոքի գոյատեւման կրնան պարգեւել երկարաշունչ վէմեր. հազիւ թէ լուրջ, համոզիչ ու խանդավառող աստղանշոյլներ կարելի է հոն գտնել, երբ ծանօթ են անոր խաչմերուկային երթին... տատամտոտ քայլերը:

Այս առիթով, երբ ականայ, առանց համեմատութեան եզրերու, լուսարձակի տակ կ'առնենք լիբանանահայ գաղութին կարգավիճակը, հակառակ իր տխրահունչ վիրաւորեալ թելերուն, տակաւին հոն կայ կամքը ու շունչը մնալու պատնէշի վրայ, իր հայախօսութեամբ ու համայնքայնութեամբ, իր տեսլապաշտութեամբ ու կենսունակութեամբ, իր ժրաջանութեամբ ու լաւատեսութեամբ, մնալով աներեր եւ անխախտ, իր հաւատոյ հանգանակներու պատկանելիութեամբ:

Ասկէ՝ բարեմիտ հարցում մը. ո՞րն է հայերուն «ԵՐԿԻՐ ԴՐԱԽՏԱՎԱՅՐԸ».

- Հայաստանը
- Ամերիկան (թէ՞ այլուր)
- Ծննդավայրը

Պատասխանը ընթերցողները թող որոշեն. (առանց յաւակնութեան ու ձեւակերպութեան, այլ՝ խոր գիտակցութեամբ ու բանականութեամբ, անմոռանալիութեամբ ու պաշտելիութեամբ):

(Պէլրութ)

«Մեր Դիտարկումով ու Դատումով» Շարքէն:

ԽՆԴՐԱՅԱՐՈՅՑ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԸ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ



Վրաստանի Հոկտեմբեր 26-ի խորհրդարանական ընտրութիւնները յատկանշուեցան ընտրական խախտումներու բազմազանութեամբ՝ ընտրակաշառք, բռնաճնշում, քուէատուփերու՝ կեղծ քուէներով լցում, կեղծ անձնաթուղթերու գործածութիւն: Երեւոյթ մը որ հայութեան մէջ գեշ յիշատակներ կ'արթնցնէ: Կը յիշեցնէ անցեալին

Ռոբերտ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի վարչակարգերու օրերուն Հայաստանի մէջ տեղի ունեցած ընտրական թունաւոր, յոռի մթնոլորտն ու յետընտրական բախումներն ու ժողովրդական լայնածաւալ ցոյցերը, նոյնիսկ սպանութիւնները 2008 Մարտ 1-ի, որոնց բացայայտումը դեռ չէ կատարած արդարադատութիւնը: 2018-ի թաւշեայ յեղափոխութիւնը Հայաստանը ձերբազատեց այս վատահամբաւ փորձանքներէն, գոնէ ժամանակաւորապէս եւ յոյսով՝ տեւականօրէն, որուն համար իսկապէս պէտք է երախտապարտ ըլլալ Հայաստանի քաղաքացիներուն, որոնց շնորհիւ սոյն յեղաշրջումը տեղի ունեցաւ:

Վրաստան անցեալին առաջինն էր որ ժողովրդավարութեան ճանապարհը բռնեց, երբ 2004-ին նախագահ ընտրեց Սահակաշվիլին: Հայաստանի ժողովուրդին համար ընդօրինակելի բնատիպ մը: Թէեւ մարտահրաւերները նոյնը չէին: 2004-էն 2024, քսան տարուան ընթացքին պատմութիւնը յետոյորձ կատարեց: Վրաստան վերադարձաւ անցեալին, յետ սովետական շրջանի ընտրական բարքերուն: Երեւոյթ մը որ կրնայ իր ժխտական ազդեցութիւնը ունենալ Հայաստանի մանուկ ժողովրդավարութեան վրայ:

Վրաստան, ինչպէս Ուքրաինան նարնջագոյն յեղափոխութեան շրջանին, Ռուսերու շատ սուր հակազդեցութեան ենթարկուեցաւ: Հայաստանի պարագային եւս Ռուսերու հակազդեցութիւնը մեծ էր, որուն ծանրագոյն գինը 2020-ի պատերազմը հանդիսացաւ, Ռուսերը ուզեցին Հայաստանը ծունկի բերել ուժի միջոցով: Հայութիւնը շատ սուղ վճարեց իր յեղափոխութեան գինը՝ պատերազմի պարտութիւն, Արցախի ցեղային մաքրագործում, Արցախի կորուստ եւ Հայաստանի ինքնիշխան տարածքէն 250 քմ. քառակուսիի գրաւում Ազերայաճանի կողմէ: Հակառակ բոլոր այս կորուստներուն եւ նուաստացումներուն՝ Հայաստանի քաղաքացիները չուզեցին վերադարձը անցեալի իշխանութեան, կաշառակերութեան, կեղծուած ընտրութիւններու, եւ 2021-ի ընտրութիւններուն դարձեալ իշխանութիւնը վստահեցան «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան, որ ժողովրդավար ու արդար ընտրութիւններ ապահովեց, Հայաստանին ընձեռելով իր ապագան ու իր ինքնորոյն ուղին ընտրելու առիթը, հաշուի առնելով բոլոր աշխարհաքաղաքական այն մարտահրաւերներն ու որոգայթները որոնք առկայ են ներկայի միջազգային յարաբերութիւններուն մէջ:

Վրաստան նախապէս տարածաշրջանի միակ պետութիւնն էր որ ժողովրդավար ու ազատ ընտրութիւններ կը կազմակերպէր, ինչ որ Հայաստանի համար շատ մեծ նեցուկ էր: Վրաստանի միջոցով Հայաստան ելք ունի դէպի ՍԵՒ ծով ու Եւրոպա: Վրաստանի ընտրութիւններուն ռուսամէտ «Վրացական երագանք» կուսակցութեան յաղթանակը

Հայաստանի վրայ ռուսական ճնշումը զօրացնելու առիթ պիտի տայ, որմէ կրնայ օգտուիլ Ազերպայճան: Այս առումով, Պարսկաստան դեռ կը մնայ ամենէն ապահով դրացին, որ կը հակառակի Ազերպայճանի կողմէ Հայաստանի սահմաններու խախտումին, Իսրայէլի հետ Պաքուի զինեալ դաշինքը զինք մեծապէս կը նեղացնէ: Եւ անշուշտ Իրանի միջոցով առիթ կը ստեղծուի հաղորդակցելու Հնդկաստանի, Ծոցի երկիրներու եւ Չինաստանի հետ: Իսկ Թուրքիոյ հետ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու անհրաժեշտ պայմանները կան, սակայն, ազերական քարիւղն ու դրամագլուխը աւելի ազդեցիկ են քան հայկական դիւանագիտական յարաբերութիւններն ու առեւտրային առաւելութիւնները:

ԺԻՐԱՅՐ ՉՈՒԱՔԵԱՆ

ՆՈՐ ՅԱՌԱՋ

31/10/2024

ԽԱՌՆԱՇՓՈԹ

«Ուժեղ կողմ չլինելու պարագային պետք է լինել

իմաստուն եւ լաւագոյնը»:

Աբրահայր Տուեա (18-րդ դար)



Չանց չառնելով եւ լրջօրէն հաշուի առնելով տիրող աշխարհաքաղաքական կացութիւնը ի սփիւռս աշխարհի, դժուար չէ ընկալել եւ հասկանալ, որ մեր սիրելի ՀՀ-ը հեռու, շատ հեռու է դասաւորուելուց ուժեղ պետութիւնների շարքին, ինչպիսին են Ռուսիան, Չինաստանը, ԱՄՆ, Հնդկաստանը, Պարսկաստանը եւ համագոր բազում ուրիշներ, որոնց հետ մենք եւս քաջութիւն եւ համարձակութիւն ունենք, որպէս իրաւահաւասար, ինքնիշխան պետութիւն ոտք մեկնելու, անշուշտ ոչ նրանց հետ հաւասար լինելու պայմանով, այլ գիտակցելով մեր իմացական ունակութիւնների ու ներուժի արժէքը, դիմակայել մեր առջեւ ծառացած մարտահրաւերներին՝ չմոռանալով մեր երկրի կարելոր աշխարհագրական դիրքը եւ աչքի զարկող դարաւոր մշակութային արժէքները: Ո՛ր եւ այսօր մեր նախնիին հակառակորդ՝ բիւզանդացիներն ու ասորիները: Իրաւացի

էր Պարոյր Սեւակը բարձրաձայն եւ հպարտութեամբ գոչելու, թէ «Մենք քիչ ենք, բայց մեզ հայ են ասում»:

Աներկբայ է, որ արդի ՀՀ-ը կայացած ինքնիշխան պետութիւն է իր թերութիւններով հանդերձ, զինուած է այլազան մարտահրաւերներին դիմակայելու կամքով, հիմնական նպատակ համարելով պետականութեան վերակառուցում, ինքնապաշտպանութեան եւ խաղաղ սահման ունենալու երաշխիք՝ հաշուի առնելով մեր կից դրացիների մեզ տիրանալու անյագ ցանկութիւնը, որի համար, ոչ միայն անհրաժեշտ է զինուել, այլ զարգացնել նաեւ բարձր իմացականութիւն դրացիների հետ յարաբերուելու ոլորտում եւ կարողանալ կառավարել ներքին տարաձայնութիւնների լայն տեսականին, մինչեւ իսկ պատժել իրաւակարգը խախտողներին, եթէ երկրի շահը այդ է պահանջում, եւ ոչ



քմահաճոյքով, այլ մնալով հանդուրժողականութեան հաւասարակշիռ սահմաններում՝ կապուած դժուարութիւնների հետ:

Մեր երկրի բարգաւաճման եւ զարգացման հետ առնչուող կարեւոր իրադարձութիւններ տեղի ունեցան անցած օրերին. նախ Պոլսոյ մէջ հոկտեմբեր 18-ին՝ 3+3 ձեւաչափով հարեւան երկրների Արտաքին գործերի նախարարների հանդիպումը, որի ընթացքին տեղի ունեցաւ նաեւ *tête à tête* հայ եւ ազերի նախարարների ներկայացուցիչների առանձնակի հանդիպումը, որի ընթացքին կողմերը համաձայնած են շարունակել իրենց ջանքերը խաղաղութեան պայմանագիրը ի վերջոյ ստորագրելու համար: Այս երեւոյթը կարելի է լուրջ առաջխաղացում համարել, եթէ նոյնիսկ ընդդիմադիր ուժերը ջանք չեն խնայում այն յոռետես եւ ձախողուած համարել առանց այլընտրանք ունենալու: Այսուհանդերձ որեւէ պատճառ կամ երաշխիք չկայ պարզամիտ լինել ու հաւատալ թուրք-ազերի գոյգի խօսքին կամ ի՛նչ որ ստորագրութեան, քանզի նրանք ընդունակ են ուխտադրուծ որեւէ արարքի: Յիշենք առաձը՝ շան հետ ընկերացիր, բայց փայտը միշտ ձեռքիդ պահիր: Տեղին է յիշել 1938-ին Մոսկուայի եւ Բեռլինի միջեւ ստորագրած դաշինքը, որ արզելք չեղաւ զինուած յարձակման: Ի վերջոյ մենք պարտաւոր ենք հաշտուել այս վիճակի հետ եւ սեղմելով ատամները շարունակել, հեռու մնալով պարզամիտ լինելուց:

Յաջորդ իրադարձութիւնը Պուտինի հրաւերով ԲՐԻԿՍ-ի Կազանում եղած համաժողովին վարչապետի մասնակցութիւնն էր: Այդ առիթով հայ վարչապետը անհատական հանդիպումներ է ունեցել անդամ եւ ոչ-անդամ երկրների ղեկավար անձանց, որոնց շարքին նաեւ Էրդոհանի եւ Ալիեւի հետ, եւ իբր տեսականօրէն բանաւոր համաձայնութեան են եկել, որ խաղաղութեան պայմանագրի ստորագրումը մօտակայ օրերին կարող է դառնալ իրականութիւն: Այս դրուագը եւս նախորդի նման կարելի է թուրքի խօսք համարելով շարունակել մեզ համար կարեւոր բանակցութիւնները, քանզի նոր տեսակի զինամերթը, որ նա մեծ քանակով կուտակում է ցուցահանդէսի համար չէ, այլ ստոյգ նպատակի :

Արդի պայմաններում, բազում լուծելիք խնդիրներ ունեցող մեր աւետեաց երկրում, քաղաքական դաշտը կառուցողական լինելու իր անհրաժեշտ մակարդակից շատ հեռու է: Շատերը չեն հասկացել եւ կը հասկանան արդեօք, որ կենսական է երկրի բարգաւաճման եւ ծառացող մարտահրաւերներին դիմակայելու համար զարգացնել ստոյգ ռազմավարութիւն, բարձր իմացականութիւն, ոտքի տակ չանցնելու համար, որքան որ դժուար լինի, յարմարուել աշխարհաքաղաքական փոփոխումներին: Սակայն այդ տրամաբանութեամբ չեն գործում ներքին վեճերի քաղաքական հեղինակները, որոնց ձայնակցում է սփիւռքի եւ հայրենի մամուլի մի մասը, իշխանութեան իւրաքանչիւր քայլ մեկնաբանելով որպէս հաճոյակատարութիւն թշնամու հանդէպ:

Ժամանակն է, եթէ ուշ չէ, որ քաղաքական ընտրանին արթնանայ եւ իր շարքերում եղած թերուս անդամներին փոխարինի անհրաժեշտ մակարդակի մտաւորականներով, որոնք կարողանան մշակել համատեղ երկարաժամկետ ծրագրեր՝ ՀՀ պետականութեան հաւասարակշիռ ապագայի սկզբունքով: Մենք կողմնակից ենք տարբեր տեսակետներին եւ հայեացքներին, միայն փոխադարձ համոզման ու համաձայնութեան պայմանով, որ հիմքն է իրական ժողովրդավարութեան եւ երբեք միասնական չի նշանակել միատեսակ մտածողութիւն:

Փոխարէնը ի՛նչ ունեցանք եւ ունենք:

Քաղաքական աճպարար խամաճիկների մի բոյլ միայն՝ ղեկավարուած ստուերում պատսպարուած ուժերի կողմից, որոնք ելնում են փողոց, որոնց միակ գաղափարախօսական նշանաբանն է վարչապետի հրաժարական պահանջելը, այլ տարբերակ չեն ունեցել, իսկ որեւէ ծրագրի մասին խօսք անգամ չի կարող լինել: Առաւել ողբալին եղաւ այն, որ այդ խաժամուժի գլուխ անցաւ ոմն բարձրաստիճան ուխտադրուծ

հոգեւորական, որ փայլում է իր տխմար եւ պիղծ հոգեբանութեամբ՝ հաւանաբար իր վերադասի բարձր քաջալերանքով եւ օրհնութեամբ:

Անյայտ է, թէ ո՞վ պիտի կարողանայ շտկել այս խառնաշփոթ կացութիւնը:

26-10-24

Ռուբէն Յովակիմեան

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆ



Յակոբ Միքայէեան

Հին դարերէն ի վեր ի՞նչ զարգացումներէ անցած են ռազմավարութիւնն ու զինատեսակները, ի՞նչ զենքեր գործածած են մարդիկ՝ սկսեալ նախամարդէն մինչեւ մեր օրերը՝ նետ ու նիզակներէն մինչեւ հրթիռներն ու արթմական ռումբը: Թերեւս ոչ մէկ այլ մարզ այսքան զարգացումի չէ ենթարկուած, որքան մարդ սպանելու նպատակով օգտագործուող զենքերն ու

ռազմավարութիւնը:

Ամէն բանէ առաջ, զինուորներէն ու զենքերէն առաջ ռազմագիտական կարելորութիւն ունէր «Անակնկալ»-ի ազդակը օգտուելով թշնամին անակնկալի բերել եւ անոր անպատրաստ վիճակէն յարձակումը գործել: Պարզ է, որ երբ թշնամին պատրաստ չէ, յաղթանակը յարձակողին կ'ըլլայ:

Այս օրերուս, անշուշտ գիտութեան զարգացման զուգահեռ, այլեւս «անակնկալ»-ի ազդակը իր իմաստը կորսնցուցած է: Իւրաքանչիւր կողմի համար թշնամիին ունեցածը զենքերը, զանազան տեղաշարժերն ու ռազմավարութիւնը դադրած են գաղտնիք ըլլալէ: Այսօր ամենայն վստահութեամբ անոնք կը յայտարարեն, թէ պիտի հակահարուած տան, սակայն երբ եւ ինչպէսը չեն հաղորդեր, որպէս փոխվրէժի իրաւունքի տէր: Որքան կը լսենք հարուած ստացած տուժող կողմէն, թէ «Հակահարուածը մեր իրաւունքն է, ժամանակն ու ձեւը մենք կ'որոշենք»: Անոնք ճշգրիտ օրը չեն նշեր, սակայն գաղտնի սպասարկութիւններ այդ «ծառայութիւնն» ալ կ'ընեն, եւ աշխարհը կը գիտնայ, թէ այս մի քանի օրերու ընթացքին պիտի տեղի ունենայ յարձակումը: Արդէն հակառակ կողմը միշտ պատրաստ է հարուածը ընդունելու եւ անոր ազդեցութիւնը նուազագոյնի վերածելու:

Երբ այսպիսի յայտարարութիւն կ'ընէ կողմերէն մէկը, սակայն կ'ուշանայ հակահարուածը, կամ բնաւ տեղի չունենար, կը գիտնանք, որ ներքին կամ արտաքին սպառումի համար «խօսք» մըն է եղածը, որ գործի չի վերածուիր: Օրինակներ յիշելու համար պրպտումներու կարիք չկայ, վերջին մէկ տարին, եւ յատկապէս վերջին ամիսներուն, նման որքան արտայայտութիւններ լսեցինք Իսրայէլ- Իրան, Իսրայէլ-Համաս եւ Իսրայէլ-Հրգապալա կթիւներու ընթացքին:

Իւրաքանչիւր պատերազմող կողմ շատ լաւ գիտէ, թէ իր թշնամին ի՞նչ տեսակի զենքեր ունի, ի՞նչ քանակութեամբ, անոնց մթերման վայրերը, անոնց կարողականութիւնը բաղդատած իր սեփական բանակի կարողականութեան: Որքան ալ որ ըլլայ, Իսրայէլը գերօժտուած է



ամենաարդիական զենքերով, քանի անդադար մատակարար հովանաւոր ԱՄՆ միշտ իր թիկունքին է ու ամենայն համարձակութեամբ կը յայտարարէ, թէ երբեք առանձին պիտի չթողու Իսրայէլը, քանի անոր ստնտունն է, որ չափ ու սահման չի ճանչնար, թէւ վերջերս իր տարած յաղթանակներէն գինովցած՝ Իսրայէլ օժանդակութիւն խնդրողի վիճակէն, անցաւ պահանջողի վիճակին, հաւատարիմ խրատուողի վիճակէն՝ ականջ չդնողի գոռոզ կեցուածքին, եւ առանց քաշուելու վարչապետ Նաթանիահուն համարձակեցաւ ըսել, թէ պարտաւոր չէ ենթարկուելու ԱՄՆ-ի բոլոր պահանջներուն, քանի ինք ԱՄՆ-ի նահանգներէն մէկը չէ:

Իսրայէլը իր բոլոր յաղթանակները ինքզինքին կը վերագրէ ու կը շարունակէ ինքնագլուխ գործել, նոյնիսկ երբ ԱՄՆ կը զգուշացնէ, որ Լիբանանէն տարածքներ չփորձէ գրաւել, կամ չփորձէ Իրանի աթոմական համալիրը հարուածել, այլապէս պիտի ստիպուի պատժել եւ որոշ օժանդակութիւններէ զրկել զայն:

Պատերազմը առիթ է իր սահմանները քայլ առ քայլ աւելի ընդարձակելու: (Կը յիշէք չէ՞ հրէական լոգունը՝ Եփրատէն մինչեւ Նեղոս քու հայրենիքն է Իսրայէլ):

Իրար յաջորդող ինչ մեծ իրանցի կամ իրանամետ անձնաւորութիւններ սպանեց իսրայէլեան բանակը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, անկէ առաջ ալ Իրաքի մէջ. պարզ է որ Իրանը պիտի պատասխանէ, կը յորդորեն Իսրայէլին իր բարեկամները, որ հակահարուածը զուսպ ըլլայ, յատկապէս չմօտենայ անոր աթոմակայանին: Իսրայէլ բաւական ուշացուց պատասխանը,, եւ զօրաւոր հարուածով մը քանդեց Իրանի հրթիռներու քիմիական լիցք պատրաստող գործարանը: Հիմա կը փորձեն մեզ համոզել, որ Իրան զուսպ ըլլայ իր պատասխան հակահարուածին մէջ, միշտ զգուշացնելով որ հակամարտութիւնը մագլցումներ չարձանագրէ:

Մարդ չի կրնար հասկնալ յորդորներուն էութիւնը: Միջինարեւելեան պատերազմ մըն է, որուն դերակատարները եթէ երկու, երեք կամ չորս են, գործին խառնուողները տասնապատիկ են. արդեօք «համաշխարհային» ըսուածը ա՞յս է:

ՅԱԿՈՒԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

- 1 Նոյեմբերի, 2024, ԱԶԳ շաբաթաթերթ

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ



ԱՇՆԱՆ ՄԷՋ

Աշնան մէջ հուրիներ իմ տաք սիրտը կայ,

Իմ ճաճանչագեղ մայրամուտը վառ,

Ուր արեւն կամաց-կամաց կը սուգուի,

Փռելով գոյներ-գոյներ ծիրանի...

Աշնան մէջ նախշուն, կարօտս հեւայ

Յուշեր առկայծուն այն բոբբ օրերուն,

Երբ սիրտս սիրով միայն թրթռար,

Խենդ ու խօլական յոյգերով վառվորուն...

Աշնան մէջ հիմա ծառս պտղաբեռն

Բերկրանքով նայի միրգերուն պէս-պէս,



Իր գարնան օրէն արեւներ ըմպած,

Շիթ-շիթ քաղցրացած միրգերուն հիւթեղ...

Ես հիմա զանոնք ձեզի՛ շաղ կու տամ,

Բոլոր սիրտերուն ծարաւ ու նօթի,

Թող անոնք դառնան ձեր պապակ շուրթին

Կենաց ջուր ու Բան սիրով արարուած:

2/11/2023

.....

ԾԻՐԱՆԱԳԵՂ ՄԱՅՐԱՄՈՒՏԻՍ

Հիմա արդէն կը նայիմ ճանապարհիս իմ անցեալ,

Ուր ոսկեշող արեւներ հորիզոնիս փայլեցան,

Գարուններուս հետ միասին հոգիս խինդով լեցուցին,

Պարուրեցին զիս վաղուան երազներով կաթոզին...

Նոյն արեւին տակ նստած կը խոկամ լուռ ու տխուր,

Երազներուս տեղ հիմա կայ մորմոքը անյայտին,

Վերջալուսցող իրիկուան մեղեղի մը տրտմանոյ՝

Զիս կը տանի՛, կը տանի՛ եզերքներուն ծիրանի...

Դեռ կը գգուեն սիրալիր ճաճանչները արեւին,

Դեռ այնքան յո՛յզ կայ սրտիս, շերտերուն ծա՛լ-ծա՛լ մտքիս,

Բի՛ւր-բի՛ւր խոհեր կ'այցելեն որոնք կարծես վերջ չունին,

Մայրամուտիս շողերը սակայն քի՛չ-քի՛չ կը մարին...



Ու անդորր մը երկնային կ'իջնէ դանդա՛ղ, յամբաքա՛յլ,

Զիս կ'առնէ իր թելերուն որ չմսիմ մեն-մենա՛կ,

Կը յուշէ ինձ տաք բառեր գորովանքով սիրաջերմ,

Օ՛ ան ունի համբոյրը ակնթարթին սիրահել...

Ծիրանագեղ մայրամո՛ւտ, հոգիս կ'օրհնէ քեզ հիմա,

Բայց երկարէ՛, երկարէ՛ պահըդ վսե՛մ, դիւթակա՛ն,

Երբ երկինքն ու երկիրը միաձուլուին ներդաշնակ,

Երբ հոգիս կը վերթելէ դէպ' անհունը անպարփա՛կ...

1/11/2021

.....

ՄԱՅՐ ԻՄ ԱՆԳԻՆ

Այնքան ատեն որ դուն կայիր, կեանքի հոգը կարծես չկար, մա՛յր իմ անգին,

Իմ թիկունքին կանգնած էիր զերթ ապառաժ մը անսասան, մա՛յր իմ անգին:

Վտիտ մարմնէդ, խորշոմներէդ սիրոյդ ոյժը յորդ կը բխէր, պարուրէր զիս,

Ինձ կը թուէր թէ ամէն բեռ հեշտ էր տանիլ լեռներն ի վեր, մա՛յր իմ անգին:

Քու մէկ խօսքդ, սիրտէդ բխած, սրտիս վերքին էր բալասան, սպեղանի,

Հրաշագործ դեղ էր, դարման ամէն ցաւիս ու մրմուռիս, մա՛յր իմ անգին:

Մի բուռ սրտիդ մէջ ովկեան կար սեր-բարութեան, գուրգուրանքի, գորովանքի,

Քեզմով կեանքը դրախտ մըն էր ծաղիկներով ծիծաղագեղ, մա՛յր իմ անգին:

Նժարին մէջ թէ բիւր գանձերն դնեմ ես լա՛յն-լա՛յն աշխարհին հոյատեսիլ,

Թեթել կշռեն քու մեծ սրտիդ, որ պարունակն էր տիեզերքին, մա՛յր իմ անգին:



Քու լուսեղէն կայքէդ վերին կը զգամ հսկես հրեշտակի պէս գիշեր ու տիւ,
Թէ ընկրկիմ յոյս ներշնչես, կանթեղ ես դուն սուրբ հաւատքի, մա՛յր իմ անգին:

Լռութեան մէջ բառեր կ'իջնեն, քու խօսքերդ դեռ կ'անձրեւեն քնքո՛ւշ, մեղմի՛ւ
Եւ օրհնութիւն ինձ կը դառնան, փարոս լուսէ ու մշտավառ, մա՛յր իմ անգին:

Եւ կարօտս կը ճենճերի, կ'եռեւեփի, դուրս կը յորդի իր ափերէն,
Կա՛յ ուրիշ սէր մը հաւասար սիրոյդ այս խոր որ անբաւ է, մայր իմ անգին:

19/10/2024

.....

ԵՐԲ

Միրտերը երբ կը խօսին լուռ

Միրոյ տենդով մը հեշտօրօր,

Ինձ կը թուի թէ

Աշխարհ մ'ամբողջ

Ծնունդ կ'առնէ

Միրագորով ...

Միրտերը երբ կը միանան

Միրոյ լոյսով լոկ սրարբաձ,

Ինձ կը թուի թէ

Յաւերժութիւնն

Ծնունդ կ'առնէ

Լուսագորով ...

Միրտերը երբ տրոփեն միասին

Զերթ մէկ հոգի եւ մէկ մարմին,



Ինձ կը թուի թէ

Անբառ աղօթք մ'է

Տիեզերական

Տիեզերահունչ....

19/6/2017

.....

ՏԱՌԵՐԴ

Երբ խաւարը իջնէ երկիր,

Կլանէ միտքը, սիրտը, հոգին,

Քու տառերդ շողարձակեն

Լուսաւորչի Կանթեղին պէս,

Վանեն մութը լուսահալած

Հրավառեն Լոյսը անափ:

Մառախուղը երբ կը պատէ

Հորիզոնը թանձր մեզով,

Լուսաճաճանչ գիրերդ վեստ

Կը ճառագեն վառ շողերով,

Կը փարատեն ամէն մշուշ

Վերին հրաշքով խորախորհուրդ:

Երբ հոգուոյս մէջ տիրէ վախը,

Ապագայի մութ կասկածը,

Ջահավառեալ կը տողանցեն

Տառերդ սուրբ ու հրեղէն,

Նոր յոյս, հաւատք կը ներշնչեն,



Հոգուոյս թելեր կը հագցընեն:

Երբ մենութեան սարսուռին մէջ

Միրտս մսի ձմեռնացեալ,

Դուն յայտնուիս որպէս ծիածան

Գարնանայորդ ու գունագեղ,

Միրտս, հոգիս կը կամարես

Դարերուն հետ, տիեզերքին հետ:

Եւ երկնքին մէջ կը գծես

Մեր ճանապարհը լուսեղէն,

Որ կը տանի դէպ' դարերը,

Դէպ' յաւերժը Արարչահեւ:

29/1/2022

.....

ՀԱՅՐԵՆԻՔ

Քեզմէ հեռու կա՛նչս եղար,

Պանդուխտ որդուոյդ կարօ՛տի լաց,

Տարագիրի առօրեայիս

Հաւատքի լո՛յս Մասիսածին...

Քեզմէ հեռու, քե՛զ հետ եղայ,

Մրտիս տրոփի՛ւն, հե՛ւքը հոգուոյս,

Խղճիս մորմո՛ք ու տառապա՛նք

Եւ աղօ՛թքս իմ խնկաբոյր...



Ուրախ պահիս՝ մշտակէզ ցա՛ւ,
Տխուր պահիս՝ լոյսի շառա՛յլ,
Դժուար պահիս՝ ոգի՛ անպարտ
Եւ ամէն պահ՝ անհաս երա՛գ...

Տառապանքիս՝ դեղ ու դարման,
Այրած սրտիս՝ սփոփարար,
Բիւր վերքերուս՝ բոյժ, բալասան
Եւ երգերուս՝ լուսէ մուսաս:

Երգերս մերթ թո՛ղի չք առին
Դէպ՛ լեռներդ արեւախի՛նդ,
Մերթ ալ իջան անդնդախո՛ր
Վիհերդ ի վար խորհրդաւոր...

Մերթ երգեցին լոյսդ անափ,
Երկնահամբո՛յր, արեգակա՛ն,
Մերթ կսկիծը կորուստներուդ
Մորմոքատա՛նջ ու մղկտո՛ւն...

Վրէժի բոցը վառեց սիրտս
Արդարութեանդ ոտքի կոխան,
Յափշտակուած մեր հողերուն,
Կոթողներուն, բիւր գանձերուն...

Ու միշտ ցա՛ւս այն կարեւլեր



Դարձաւ հառաչանք սրտամաշ՝

Չկարենալ մօտդ ըլլալ

Հագար ու մի տագնապիդ մէջ...

Ու չեմ գիտեր պիտի ներե՞ս

Որ քրտինքս ու արիւնս

Ես չկրցայ հողիդ խառնել,

Դառնալ իրա՛ւ քու զինուորդ:

30/3/2022

.....

ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ԱՂԱՊԱՏԱՆՔԸ

Բառս մնաց լուսածարաւ,

Բառս մնաց սիրածարաւ,

Կա՛թ-կա՛թ սիրտս ցաթեց վրան,

Չյագեցաւ բառս անյագ:

Արեւէն լոյս պաղատեցի,

Աստղերէն ցոլք ես խնդրեցի,

Սիրալոյսով շաղախեցի,

Բառս մնաց միշտ ալ թերի...

Երկնէն ցօղեր կաթեցան մեղմ,

Ծաղիկներէն՝ բոյր ու թոյրեր,

Ծիածանէն բիւր երանգներ,

Բառս մնաց կարօտահեւ...



Բառս մնաց հեզ ու խոնարհ

Դայլայլին քով թռչուններուն,

Մեղեդիին տերեւներուն,

Կարկաչին քով գետակին վառ:

Բառս, սակայն, դեռ կը սպասէ

Պահին այն հրաշք, ճառագայթուն,

Երբ գայ մուսաս եւ զայն օծէ

Աստուածային միտունով սուրբ:

26/6/2022

.....

ՄՐՏԻ ԽՕՍՔ ՍԷՍ ԵՈՒՍԷՖԵԱՆԻ

ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԵԱՆ

Վաղեմի եւ թանկագին բարեկամս Սեմ, Սամիկ,

Արդէն հեռու էինք իրարմէ, հիմա ա՛լ աւելի հեռացար:

Անողոք հիւանդութեան մանգաղը չխնայեց նաեւ քեզի ու հիմա հնձած կը տանի հեռո՛ւ, հեռո՛ւ բոլորէս, խոր վշտի մատնելով հարագատներդ, բարեկամներդ, մելգոնեանցի քոյրերդ եւ եղբայրներդ:

Ճակատագրի բերումով, Ամերիկա-Կիպրոս անջրպետային հեռաւորութիւնը, որքան ալ որ ատեն-ատեն մեզ կը բերէր իրարու մօտ, ալ շատո՛նց զրկած էր մեզ անցեալի ամէնօրեայ մեր հանդիպումներէն, եւ հեռաձայնն էր միայն որ անկատար մխիթարանք մը կու տար եղբայրական մեր կարօտին:

Վերջին ամիսներուն սակայն սարսուռով տեղեկանալէ ետք ծանր հիւանդութեանդ մասին, այդ հեռաձայնը, աւելի ճիշդ՝ դիմաձայնը, ցաւատանջ վիճակ մը սկսաւ ստեղծել մէջս: Կարծես կը պարպուէի յոյսերէ երբ ալ կը զգայի որ սիրտդ կ'արշաւէր ծանօթ ուղղութեամբ դէպի անձանօթ աշխարհ, մինչեւ որ երէկ Յասմիկին արցունքները զուժեն այդ աղուոր սրտիդ վերջին տրոփը:

Ներէ՛ որ քովդ չեմ այս պահուս, ներէ՛ որ չեմ խոնարհիիր ցուրտ դագաղիդ առջեւ, ներէ՛ որ թաց թաշկինակ չեմ շարժեր անոր ետեւէն, ներէ՛ որ չեմ կրնար համբուրել սառած դէմքդ, որմէ ճառագայթող ժպիտդ մար չէր մտներ երբեք, երբեք...



Չեմ կրնար հաւատալ որ քիչ ետք քեզ պիտի յանձնեն հողին, հեռո՛ւ Լիբանանի մայրիներէն, հեռո՛ւ Մելգոնեանի անտառներէն, ուր ե՛ւ պատանեկութիւն, ե՛ւ երիտասարդութիւն կիսեցինք, իրարու համագոր եւ համարժեք իրա՛ւ, անկէ՛ դժ, մշտակա՛ն եւ աւելի քան եօթանասուն տարիներու օրինակելի բարեկամութեամբ:

Այն ատեն երազներ շատ ունեցար, Մեմ եւ նոյն այդ մայրիներու շուրջին՝ երազներու բուրգ մը կառուցիր, կառուցած շէնքերուդ նման, իբրեւ երջանկութեան բոյն ընտանիքիդ համար: Մակայն Լիբանանի քաղաքացիական ահաւոր պատերազմը փլատակուող շէնքերուն նման, ափսո՛ս ականահարեց նաեւ այդ բուրգը, քեզ եւ շատ-շատ լիբանանցիներ դնելով բախտը

այլուր որոնելու հարկադրանքին տակ: Տեղատարափ կրակոցներուն տակ քանի-քանի անգամներ հրաշքով մահուան կամուրջներ ճեղքեցիր, մինչեւ որ ճեղքես այս անգամ Ատլանտեանի ապահով կամուրջը, կայք հաստատելու երազներու միւս աշխարհը՝ Ամերիկան, ծիծեռնակին օրինակով վերաշինելու բոյնդ գերոյէն սկսելով ամէն ինչ:

Հո՛ն, հանապազօրեայ հացի պայքարը դարձաւ կեանքի նոր նպատակ, անխուսափելիօրէն, ուղեղ քերթող, սիրտ հալեցնող նոր ողիմպիական մր: Բայց շնորհիւ աննկուն կամքիդ, յամառութեանդ եւ յարատեւութեանդ, գտար յաջողութեան նախանձելի արգասիքը: Օգտուիլ, օգտագործել չունեցար, բայց օգնել, օժանդակել, ձեռք տալ ունեցար, առանց որեւէ սակարկութեան:

Որքա՛ն ուրախ էիր Մեմ, ընտանիքեդ բխող հրճուանքդ, հպարտութիւնդ եւ առողջութիւնդ՝ տեղին, երբ մէկ օրէն միւսը այս անիծեալ թշնամին փոթորիկ պայթեցուց երդիքիդ տակ ու գողգոթայ բերաւ մանաւանդ կեանքի թանկագին ընկերոջդ՝ Յասմիկին, որուն հետ ծլած ու ծաղկած էր սերդ Մելգոնեանի կամարներուն տակ եւ որուն անսահման գուրգուրանքն ու հոգածութիւնը բազմապատիկ գրկեցին քեզ, նեղ այս օրերուն, իբրեւ դալուկ մարմնիդ գոյն տուող բալասան:

Դեռ յոյսի նշոյլ մը կը կայծկլտար մեր դիմաձայնին մէջ, երբ կու տայիր բժշկական դարմանումի վերջին լուրերդ: «Այսօր նոր քննութիւն պիտի ընեն», «Այսօր նոր դեղ պիտի փորձեն», «Այսօր աւելի լաւ կը զգամ», «Այսօր office պիտի երթամ», ինչ փոյթ թէ անստոյգ եւ խաբուսիկ սփոփանք ըլլար անիկա:



Դեռ շատ բան կը խոստանայիր Սէմ, շատ բան ունէիր ցանելիք եւ շատ բան ունէիր քաղելիք:

Եղար տիպար ամուսին, հա՛յր, մեծ հայր եւ ճշմարիտ բարեկամ, կեղծիքի հակառակ մարդկային ոգիի յարատեւման ի խնդիր: Մատիտը, քանակը եւ կարկինը գործածեցիր թէ աշխատատեղիիդ մէջ եւ թէ ընկերային շրջանակի մէջ: Իբրեւ ճարտարապետ գիտցար նաեւ կերտել ոչ միայն շէնքեր, այլեւ՝ սիրտեր, իբրեւ զուգահեռական մնայուն ուղեգիծ, թե՛ նեղ, թէ լայն օրերուն: Անոր համար փնտռուած եւ յարգուած անձ մը եղար բոլորէն: Գիտակցութիւնդ, դատողութիւնդ, բարոյական կորովդ, այլ մանաւանդ՝ շէնշող զուարթախօսութիւնդ, կատակասիրութիւնդ, անէքթոտներդ պահեցիր նոյն աստիճանին վրայ, նոյնիսկ երբ տանջանքը ներքնապէս կը հալեցնէր քեզ ցաւի ու մղձաւանջի գրկին մէջ:

Բարակութիւններու եւ բարկութիւններու ալ նայողը չեղար Սէմ: Միշտ ժուժկալ՝ ինչպէս ճաշի սեղանիդ վրայ, մեղմաբարոյ եւ վստահելի բնատրութեանդ արժանիքները բաշխելով շրջապատիդ, ճիշդ այն խրատականներուն ու իմաստալից խօսքերուն նման, որոնք կէս մը թանգարան-գրասենեակիդ պատերէն կախուած կ'ըլլային միշտ իբրեւ կեանքի շիտակ ուղեգիծ:

Գիտելիքներու շտեմարան եղար Սէմ, հետաքրքրութիւններու միշտ ասակ եւ ատով իրերու ծուռ ընթացքը, անարդարութիւնները, տգեղութիւնները նետահարեցիր այնպիսի ընդվզումով եւ հեզնանքով, որ կը ձգտէր դարման փնտռել ազնիւ նպատակներու առարկայացման մէջ:

Երէկ կայիր, այսօր չկաս ալ, Յասմիկին համար, Թալինին համար, Վիզէնին համար, հոգեհատորներուդ համար, քրոջդ համար, հարազատներուդ համար, մելգոնեանցի քոյրերուդ եւ եղբայրներուդ համար, Յովիկին համար, բոլորիս համար, Սիլվային եւ ինձի համար, խորունկ փոս մը փորելով մեր սրտերուն մէջ, փոս մը, որ դժուար է գոցել:

Վաղը սուգ եւ արտասուք թերեւս մեղմանան եւ հողակոյտիդ ծաղիկներն ալ թառամին, բայց գիտցիր որ յիշատակդ պիտի չթառամի երբեք: Պիտի փնտռենք քեզ:

Երթա՛ս բարով, յաւէտ երախտապարտ պիտի մնամ թանկագին բարեկամութեանդ համար: Հողը թէթեւ գայ վրադ: Երթաս բարով, Սէմ:

Վարդան Թաշճեան

3 Հոկտեմբեր, 2024

Նիկոսիա

ՊԷՅՐՈՒԹԻ ՓՈՂՈՑՆԵՐԸ

Մարուշ Երամեան



Անգամ մը եւս Պէյրուօթը կ'այրի, անգամ մը եւս ո՛չ իր հարցերուն կամ պայքարին համար: Ամէն օր լսուող լուրերը կ'արթնցնեն յուշը եւ ափսոսանքի լեղին կը շարունակէ տառապեցնել մեզ:

«Կարծեմ երբեք նման տողեր պիտի չգրուին Պէյրուօթի մասին, գոնէ իմ սերունդի գրիչներուն կողմէ: Մեր Պէյրուօթը Ղարալիյէն կամ Շարքիյէն էր, հին փողոցներ չկային, կային քանդուող փողոցներ»:

Ասիկա գրեր էր Խաչիկը (ՏՂ), կարդալէ ետք «Հալէպի Հին Թաղերը»:

Կարդացի իր տողերը եւ վրաս խուժեցին Պէյրուօթ ապրած տարիներուս յուշերը, Պէյրուօթի ա՛յն թաղերը, որոնց ծանօթ էի եւ որոնք կարելոր դարձեր էին ինձի համար: Որոշեցի յիշածներս գրի առնել, նախքան որ անոնք ալ անհետանան, այլ յուշերու նման:

Ամէն օր կ'ելլէի մայրապետներու վանքէն, ուր որպէս գիշերօթիկ կը մնայի, կ'առնէի սերվիսը Ժտէյտի հրապարակէն, կ'իջնէի Նահատակաց հրապարակին վրայ եւ հոնկէ կը քալէի մինչեւ Երաժշտանոց, որ Ս. Նշան եկեղեցոյ գրեթէ դիմացն էր, գառիվերին վրայ:

Հրապարակը մի՛շտ խճողուած կ'ըլլար եւ ինձի՝ Հալէպ «գաւառ»-էն այս Փրթի Փաղին ինկածիս համար՝ նաեւ քիչիկ մը վախազոտ:

Կը փորձէի վախս զսպել եւ չորս կողմս դիտել: Այդպէս էր որ Սուլի հրապարակին վրայ, դէպի երաժշտանոց գացող ճամբուն սկիզբի անկիւնը, Librarie Antoine-ը գտեր էի եւ օր մը, դասէս ետք մտայ հոն:

Աստուա՛ծ իմ. դրա՛խտ էր. կարծեմ առաջին մեծ, իրապէ՛ս մեծ գրախանութն էր, որ կը տեսնէի:

Դէպի վեր, կամ դէպի վար գացող աստիճաններուն վրայ նստած ընթերցող երիտասարդ-երիտասարդուհիները պարզապէս նախանձս շարժեցին: Որոշեցի որ մի՛շտ պիտի գամ ու ես ալ իրենց պէս՝ աստիճաններուն վրայ նստած գիրք կարդամ:

Նոյնիսկ այդ օրերուն մտածեր էի՝ «Բայց կրնամ գիրք չգնել (ուսանող էի եւ բոլոր ուսանողներուն նման՝ գրպանս մի՛շտ պարապ էր ...), այլ ամէն օր գալ, նոյն գիրքը առնել եւ աստիճաններուն վրայ նստած կարդալ, մինչեւ վերջանայ»: Չէի գիտեր՝ արդե՞օք արտօնուած էր նման բան ընել, թէ ի վերջոյ պիտի ստիպեն քեզ կա՛մ գնել գիրքը, կա՛մ ալ գրախանութ չգալ:



Առիթ չունեցայ սակայն այս ծրագիրս գործադրելու եւ գաղափարս հաստատելու կամ ջրելու:

Յետոյ սկսայ ապրիլ մեծ մօրաքոյր Զեքիէին տունը, որուն ամուսինը մինակը կ'ապրէր, կնոջ մահէն ետք: Հայահոծ շրջան մըն էր Ուաթուաթը («Ոչ ոչ, Ուէթուէթ», կը ճշդէ լիբանանցի Խաչիկը). կ'ըսէին թէ երբ հալէպահայեր եւ քրիստոնէայ հալէպցիներ Պէրուի գաղթէր են, սկիզբը ա՛յո՛ շրջանին մէջ բնակութիւն հաստատէր են: Նոյնիսկ անեքթոտ մըն ալ կայ.

Հալէպցի տիկին մը թաքսի մը կ'առնէ, գացած տեղէն տուն վերադառնալու համար: Բայց երբ վարորդը տան հասցէն կը հարցնէ, կինը շլմորած կ'ըսէ արաբերէնով.

_ Ուա իս, մոռցայ:

_ Հասկցայ, _ կը պատասխանէ վարորդը ինդալով, _ Ուախուախ փողոց, չէ՞:

_ Այո՛ այո՛ , յիշեցի, Ուաթուաթ փողոց, _ կ'ուրախանայ տիկին հալէպցին:

Այնտեղ էր Նշան Փալանճեան Ճեմարանը, որուն նուիրատուները՝ Փալանճեան քոյրերը, իրենց եղբօր յիշատակին համար կեանքի կոչած այդ հաստատութիւնը, եղած են ... եգիպտահայ տիգրանակերտցիներ:

Այդ նեղ թաղին մէջ էր նաեւ նշանաւոր Եղիային փուռը, որ համեղ լահմաճուն կը պատրաստէր: Կիները միւր պատրաստած կը տանէին, իսկ փռապանը, իրեն բաժին հասած պատրաստ լահմաճունները հատով կը ծախէր մեզի պէս տան մէջ եփող չունեցողներուն:

Կ'ըսէին թէ այդ թաղին մէջ լիբանանահայ շատ նշանաւոր անձեր կը բնակէին. ես զանոնք չեմ ճանչցած դժբախտաբար, բայց անոնց մասին ի՛նչ աղուոր յուշեր պատմէր է Վեհանոյշը: Կը յիշեմ որ մեծ մօրաքրոջս տան թաղէն կրնայի դուրս, պողոտայ ելլել եւ քիչ մը ծովուն ուղղութեամբ քալելէ ետք, կը հասնէի նշանաւոր Արլըքէն սրճարան-ծաղարանը:

Օր մը հաւաքեցի նոր գնած երեք գիրքերս, տետրակս եւ հոն, վերի յարկը ելայ կարդալու, գրելու եւ անշուշտ սուրճ մը խմելու: Բաւական նստելէ ետք անդրադարձայ, թէ ոչ ոք եկաւ հարցնելու ի՛նչ կ'ուզեմ խմել: Քիչ մըն ալ սպասեցի, յետոյ վար իջայ գիրքերս շակած. երթալուս ժամն էր արդէն:

_ Բայց ինչո՞ւ մէկը չեկաւ հարցնելու թէ ի՛նչ կ'ուզեմ խմել, _ ըսի սպասեակին:

_ Խորհեցայ թէ մէկը կը սպասէիր, _ ըսաւ խորամանկ ժպիտով:

Այդ ճամբան գառիվարի վրայ էր, երկու կողմի շէնքերը այնքան ալ բարձր չէին եւ ծովը կ'երեւէր ամէն օր իր տարբեր տրամադրութիւններով, իր տարբեր, բայց մի՛շտ հմայիչ կապոյտով:

Պըրճ Էլ Մըրրը նոր սկսէր էր շինուիլ, եւ բարձրացող կռունկը տեսարանը սկսէր էր խանգարել:

Նոյն ճամբուն ձախ կողմն էր նաեւ Մըրսոք թանգարանը, որուն ցանկապատէն դուրս յորդող ծառ ու ծաղիկը երեւակայութիւնս կը բռնկեցնէր, ու երբ դարպասը բաց գտնէի, անխիպ կերպով կը դիտէի ներսի աղուոր պարտէզը:

Մէկ անգամ միայն առիթ ունեցայ այնտեղ ցուցադրութիւն մը դիտելու: Հոն գտայ Անիթա Թութիկեանին գործերն ու զինք: Հաճելի անակնկալ էր ինձի համար իր այնքան անսովոր կերպարը՝ համարձակ, ազատ, կայտառ, մի՛շտ ինքզինք ստեղծագործելու ընթացքին մէջ, որովհետեւ արուեստի իր գործերէն աւելի, կարծես ինքզինք էր որ կը քանդակէր այդ պարիկը:

Այդ շրջանին մէջ էր ՀԲԸՄ-ի Ալէք Մանուկեան կեդրոնը, որուն շքեղութիւնը կարելի չէր պատկերացնել նեղ թաղին մէջէն ներս մտնելով:

Հսկայ շէնք մը, հողին վրայ բազմաթիւ յարկերով, որուն վերջին յարկը տրամադրուած էր «Ասպետներուն», իսկ հողին տակ պասքէթի դաշտով եւ կառանատեղով:

Յետոյ, դուրսի պողոտային վրայ կու գար Արամ Մանուկեան Ժողովրդային տունը, քիչ մը վեր՝ Հայկազեան համալսարանը, որ այդ օրերուն տակաւին գոլէճ էր:



Յետոյ կը սկսէր նշանաւոր Կարմիր պողոտան՝ Համրան, իր մայթերի հմայիչ սրճարաններով, Մարուլլա սինեմայով, ապակեպատ պետական ցուցասրահով ...

Նոյն փողոցին վրայ էր Գափուչիններու նշանաւոր եկեղեցին (ինչո՞ւ նշանաւոր, չեմ գիտեր) եւ անշուշտ Արաեանին փէնթ-հաուզը, ամբողջովին նոր մօտեցում մը տուն կամ յարկաբաժին ըսուածին: Արան մեր ազգականուհիներէն մէկուն հետ ամուսնացեր էր եւ դարձեր մեր գերդաստանին կարծեմ ամէնէն հարուստ փեսան: Ուղղակի ափ ի բերան մնացեր էի այդ տունը տեսնելով:

Համրան կը վերջանար ինծի համար հոն, ուր կը սկսէր Red Shoe-ն իր մեծ վաճառատունով: Համրան սակայն նաեւ ու մանաւանդ իր մայթերուն վրայ ճեմողներով Համրա դարձեր էր՝ հմայիչ կիներ, որոնց մէջ աւելի աչքդ կը խաճնէին միջին տարիքի հասուն կիները իրենց արդուզարդով, չսպառող պչրանքով, կեանքը խնձորի պէս խաճնելով ուտելու անյագութեամբ: Իսկապէ՛ս մէկական տիպարներ էին անոնք, որոնց համար աշխարհը իրենց սրունքներուն տակ էր, իսկ կեանքը կը խոնարհէր իրենց հմայքին առջեւ:

Այս բոլորը՝ մայթերուն վրայ: Մայթերէն վար՝ վերջին նորոյթի ինքնաշարժներ, որոնց անունը լսեր էի, բայց պատկերներն իսկ տեսած չէի...

Վայելք էր հոն քալելը: Փողոցին սկիզբը կ'իջնէի սերվիսէն եւ քալելով կ'երթայի մօրաքրոջս տունը, որուն փողոցին ճի՛շդ դէմն էր ամերիկեան մշակոյթի կեդրոնը՝ Kenedy Center-ը: Թէ ինչ կար հոն, չեմ յիշեր, բացի գրադարանէն, ուրկէ սկսէր էի գիրքեր փոխ առնել. ու երբ պատերազմին առաջին ահագանգը եկաւ, այդ կեդրոնը փակուեցաւ, իսկ փոխ առած գիրքերէս վերջինը մնաց քովս: Մինչեւ այսօր: Արդեօք որո՞ւ պէտք է վերադարձնեմ զայն ...

Օտար քաղաք էր ինծի համար Պէրուօթը, մանաւանդ այդ առաջին տարին. հակառակ ասոր, կը սիրէի քալել մեր շրջանի նեղ թաղերուն մէջ, որոնք յատուկ հոտ մը ունէին, հաւանաբար մենատուներու պարտեզներէն դուրս սպրդած. երկյարկանի գեղեցիկ մենատուններ, որոնց վրայ կը պսպղար լիբանանեան ճարտարապետութիւնը իր ուրոյնութեամբ: Փակ պատուհաններ, փոքրիկ պարտեզներ, եւ թռչուններու ճռուողիւնով կէտադրուած լռութիւն: Կը քալէի եւ երեւակայութիւնս թափ կ'առնէր՝ արդեօք ինչպէ՛ս է կեանքը այս տուներէն ներս, ուր, կը կարծէի, ապրիլը երջանկութիւն կրնայ պարգեւել ամէնէն տխուր մարդուն իսկ: Տակաւին հեռու էր պատերազմը, որուն կասկածն իսկ չունէի: Այդ օրերուն ոչ ոք ունէր այդ կասկածը կամ անոր ահաւոր տարողութեան գիտակցութիւնը:

Յետոյի օրերը բարի չեղան Պէրուօթին եւ Լիբանանին համար:

Բարեբախտաբար մնացին յուշերը, թոռմած ծաղիկներու տխուր թախիծով:

Իսկ այսօր, նոր այս հրդեհին դիմաց, յուշերու այդ չոր ծաղիկներն իսկ լռութեամբ կը թափին, կը մաղուին ... Բարեբախտաբար մեր սրտերուն մէջ մնալու համար:


(Պրիսմակէս)

<http://www.kantsasar.com/news/52648-2/>



ՀԱՅԵՐԷՆ ՉԵՄ ԿՐՆԱՐ ԽՕՍԻԼ

Սեւան Ա. Մանճիկեան



Տարիները թաւալզոր սահեցան: Ահաւասիկ տասնամեակէ մը աւելի տարիներ անցան այդ օրէն, երբ սուրիական հայրենիքը պարտադրաբար լքեցի եւ փոխադրուեցայ ովկիանոսէն անդին: Առաջին քանի մը տարին նոր շրջանակը, ապրելակերպը, գործը եւ ծնողքիս ու հարազատներուս բացակայութիւնը զիս տանջեցին: Հետզհետէ այդ

բոլորը յաղթահարելով նոր ճամբաս հարթեցի եւ խաղաղութեամբ կեանքս շարունակեցի: Ինչ մեղքս պահեմ՝ երեսի վրայ լքած տունիս-տեղիս կարօտը, ընկերներուս, շրջանակիս եւ անցեալի օրերու փնտռտուքը տւաբար միտքս կը տանջէին: Այս բոլորը մէկ կողմ, օտար լեզուով խօսիլը ամէն տեղ զիս աւելի կը տանջէր: Ստիպուած էի գործի, շուկայի, հեռաձայններ պատասխանելու եւ զանազան պայմաններու մէջ օտար լեզուով խօսիլ: Հայերէնը ինչպէ՛ս եւ ո՞ր օգտագործէի, միջավայր չկար: Երբեմն երբ եկեղեցոյ մէջ կամ ձեռնարկի մը ընթացքին հանդիպէի ծանօթներու, որոնք ինծի նման նոր հաստատուած էին այնտեղ, անոնց հետ մեծ հաճոյքով ու կարօտով հայերէն կը խօսէի, հոգիս ցնծութեամբ կը լեցուէր, թէկուզ երբեմն օտար բառեր խճճուէին մեր խօսակցութեան մէջ կամ սխալ հնչիւններ արտաբերուէին մեր խօսքերէն, ի՛նչ հոգ, տիրոջը հայերէնն էր:

Սովորական շաբաթավերջ մըն է: Ինչպէս ամէն շաբաթ օր, տան պետքերու երկար ցանկ մը ձեռքիս կը շրջէի հանրախանութի մը (մօլ) մէջ՝ ապահովելու համար ցանկիս մէջ գրուած տան պետքերը: Յանկարծ ապշահար դարձայ՝ տեսնելով ծանօթ, գեղադէմ տիկին մը, որ ինք եւս ինծի կը նայէր շփոթած ու երկմտած: Ժպիտով մը կը մօտենար ինծի: Յիշողութեանս էջերը արագ-արագ կը թերթատէի՝ անոնց մէջ գտնելու իր ով ըլլալը: Դասընկերուհիս էր: Անցեալ տասը տարիները չէին կրցած զինք փոխել, սակայն մազի նէ՛րկը, իր նիհար մարմինին փոխուած ըլլալը, թէ անսպասելի հանդիպումն էր զիս շփոթի մատնողը՝ չըմբռնեցի: Տեղոյն վրայ իրար անուններ բարձրաձայնելով գրկախառնուեցանք: Աշխարհը որքան փոքր է: Այսպիսի անակնկալի ալ կը հանդիպինք եղեր...:

Փորձեցի հասկնալ, թէ ինչպէ՛ս եղաւ որ հոս յայտնուեցաւ, ե՛րբ, ի՞նչ կ'ընէ հոս: Այս բոլոր հարցումները մտքիս մէջ արագ-արագ պատրաստելով ուզեցի իրեն դիմել պատասխան ստանալու համար, սակայն... չար սատանայ, հայերէն բառեր փնտռեցի, փորձեցի հարցումներս շարահիւսել մտքիս մէջ, սակայն չկրցայ հայերէն խօսիլ, որքան չարչրկեցի միտքս, փորձեցի, փորձեցի ու յաջողեցայ:

Արիւնը գլուխս խուժեց, սիրտս արագ-արագ սկսաւ տրոփել: Աստուած՝ իմ, այս ի՞նչ փորձանք է, այս օրուս՝ն պիտի հասնէի: Ամբողջ կեանքս հպարտ էի հայ ըլլալուս համար, հայերէնով խօսիլը ինծի համար սրբութիւն էր, ի՞նչ պատահեցաւ ինծի: Ընկերուհիս ճակտիս փայլող քրտինքը սրբելով կը փորձէր զիս հանդարտեցնել եւ օգնել, բայց ափսոս, ոչ մէկ բառ կրնայի արտասանել հայերէնով...:

Բջիջային հեռաձայնիս զարթեցուցիչին ձայնը սթափեցուց զիս: Միրտս տակաւին արագ-արագ կը տրոփէր: Աչքերս բացի: Չորս կողմս դիտեցի ու ննջասենեակիս մանրամասնութիւնները աչքէ անցուցի: Շուտով հեռաձայնս բացի, կապուեցայ քրոջս.

Ա՛յօ, բարի լոյս, ինչպէ՞ս էք, ի՞նչ կ'ընէք, զուակներս ինչպէ՞ս են, պատմէ՛, երկար պատմէ՛, ... հայերէնով հարցուցի:

Քոյրս շփոթած տեղատարափ հարցումներէս եւ իրար անցած վիճակէս, փորձեց զիս հանդարտեցնել ու բան մը հասկնալ հարցումներէս, ապա հատիկ-հատիկ պատասխանեց հայերէնով:

Փառք տուի Աստուծոյ, որ տակաւին հայերէն կը խօսէի ու կը հասկնայի: Տէր Աստուած, այս ի՞նչ դաժան մղձաւանջ էր:

<http://www.kantsasar.com/news/52982-2/>

ԵՍ/ ԱՅՍ ՔԱՂԱՔԸ



Ես եմ այս քաղաքը,
այստեղ թաղուած է մանկութիւնս՝
վայրկեաններ, որոնք հիմա արդէն զիս կ'ուրանան,
ուր ամէն մէկ փողոցի ամէն մէկ պատշգամին վրայ,
խնճոյք մը կայ բեմադրուած,
ամէն մէկ լոյսի ամէն մէկ աղօտ փայլքին մէջ,
սիրահարութիւն մը կայ շատոնց վիժած,
ուր ամէն մէկ աղջկայ ժպիտին խորքը,
գաղտնիք մը կայ արդէն դաւաճանուած,
ամէն մէկ ծերունիի աչքերուն յատակը,
արցունքի ծովեր կան անյոյս չորցած,
ամէն բանուորի քրտինքի կաթիլին մէջ,
վիշտեր ու կորուստներ կան ալեկոծող,



Եւ կան բոյրեր, կան յուշեր,
կան նաեւ բոյրերու յուշեր:

Ես եմ այս քաղաքը,
ուր անասելի պատմութիւններ կան
գաղթական մեծ մօրս ճակատի կնճիռներուն մէջերը,
ուր մօրս փափուկ ձեռքերը կան
մանուկ ափերուս մէջ պինդ սեղմած, հոս,
ուր մարդիկ յամառօրէն մերժեցին պատերազմի երթալ,
բայց ուր պատերազմը եկաւ, զիրենք գտաւ,
հաճոյքով սպաննեց, քաշեց-տարաւ,
Եւ անյայտ տեղեր թաղեց ու իբր թէ հեռացաւ.
Նորատունկ անմեղութիւններ կան
մութ խանութներու մէջ քանիցս բռնաբարուած,
Եւ թելերս կան իւրաքանչիւր սուրճի գաւաթի յատակը,
Պոլոնիայի մշուշոտ անտառներուն մէջ տեղ մը,
տեղ մը կտրուած, տեղ մը ծալուած, ու տեղ մը նետուած:

Ես եմ այս քաղաքը,
ուր իւրաքանչիւր քարի ու քայլի տակ,
աշխարհ մը խռովք կայ երկրի խորերը թաղուած՝
գանկ մը կայ, սիրտ մը կամ խիղճ մը հողին խառնուած,
Եգիպտացի պոռնիկներու ոսկի ակռաներուն փայլքով
երագներ կան թռիչք առած ու տեղ չհասած,
անուշեղենի կաթկթող իւղոտ հիւթէն կախուած
կեանք մը կայ հրապուրիչ Եւ շատ խախուտ,
աշխարհ մը կար ժպտուն
հիմա արդէն կապկող ու կեղծարար.
հոս ծաղիկներ չկան այլեւս նորոգուող ու նորոգող,
հոս այլեւս յոյսեր չկան անվերջ Եւ անյոյս աճող,
մինչ Ֆէրուզին բառերն ալ հիւծած են՝ այլեւս չկան,
միայն ամեն կողմ ցցուող ու խամրող յուշերէս
գաղտնի պահած մէկ սիրոյս ցաւեր կան:

ՎԻԳԷՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ

8/7/2024



հասկնանք զիրար, զօրավիզ ըլլանք իրարու, փորձենք, գէթ փորձենք զիրար ԶԳԱԼ: Քանզի առանց ԶԳԱԼՈՒ, երբէք պիտի չկարենանք զիրար ՀԱՍԿՆԱԼ:

.....

Բարձրացնելով՝ կը բարձրանաս...Որքան ճիշդ է սա բոլոր պարագաներուն ալ: Դիմացինին մէջ միշտ պիտի փնտռենք լաւը, գեղեցիկը, բարին՝ որ կայ մեզմէ իւրաքանչիւրին մէջ ալ՝ տարբեր կերպեր հագած, մերթ՝ թաքուն, մերթ՝ բացայայտ...: Լաւ դեկավարը, ուսուցիչը, ընկերը, մարդը ընդհանրապէս ա՛ն է ով կրնայ ԼԱԻԱԳՈՅՆԸ յայտնաբերել դիմացինին մէջ, ա՛ն՝ ով կրնայ այդ ԼԱԻԱԳՈՅՆԸ ծաղկեցնել, արդիւնատրել: Նման մարդիկ կրնան բարեփոխել իրենց շրջապատը, նոյնիսկ ՀԱՅ ԿԵԱՆՔԸ կաթիլ առ կաթիլ...

.....

ԳԵՐԱԳՈՅՆ ԵՐՁԱՆԿՈՒԹԻՒՆԸ՝ սեփական խղճին հետ հաշտ ու խաղաղ ապրիլն է...Ի՞նչ փոյթ թէ մարդիկ քեզ այպանեն, տարօրինակ գտնելով միամիտ ճշմարտախօսութիւնդ, անոր մէջ այլ յետին նպատակներ ալ փնտռելով...Ի՞նչ փոյթ թէ այլոց շռայլուած բարձրագոյ զնահատանքը երբեք չհասնի քեզ...Ի՞նչ փոյթ թէ անշահախնդրութիւնդ անբնական երեւոյթ նկատուի ներկայ նիւթապաշտ եւ շահախնդիր աշխարհին մէջ...Ի՞նչ ՓՈՅԹ...Կը բաւէ որ սիրով, արժանատութեամբ կատարես պարտականութիւններդ, խօսքդ ըլլայ գործիդ հետ հաշտ...եւ միշտ ձգտիս ընելու աւելին, աւելի լաւը, բարին, գեղեցիկը, ճշմարիտը՝ միշտ ունկնդիր ՆԵՐՔԻՆ ԶԱՅՆԻԴ, որ ԳԵՐԱԳՈՅՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ՝ ԱՐԱՐԻՉԻ ԶԱՅՆՆ Է...ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԵՍ-ԻՂ, որ կարծես ամէն վայրկեան կը հսկէ ըրածիդ ու չըրածիդ վրայ, կը զգաստացնէ, կը յորդորէ, կը լուսատրէ ճամբադ՝ կեանքի ուղեմուտը ոլորաններուն վրայ...

.....

Ներկայ աշխարհակարգի նպատակներէն մէկը կը թուի ըլլալ՝ այնպիսի քառսային իրավիճակներ ստեղծել աշխարհով մէկ, որ մարդուն գիտակցութիւնը մշուշապատուի, ան չկարենայ հասկնալ ո՞վ է թշնամին, ո՞վ է բարեկամը...ո՞րն է սխալը, ո՞րն է ճիշդը...ո՞րն է կեղծը, ո՞րն է անկեղծը...եւ այդ քառսին մէջ, աշխարհի կառավարման կէտերը կարենան իրենց սեփական շահերը ապահովել...

.....

ՏԵՂԵԿԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ մեր ժամանակներուն, մարդ էակը աւելի շատ կեդրոնացած է ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ստանալու, զայն փոխանցելու մտասեւեռումին, քան ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ որեւէ աշխատանքի վրայ, ինչ որ բազմապատիկ աւելի էական է ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ, ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՒՄԻ եւ ԱԶԳԱՅԻՆ-ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱ՛Ի ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ...Շեշտը դրուած է տեղեկութեանց, ծանօթութեանց ՔԱՆԱԿԻՆ, քան հոգեւոր ՄՇԱԿՈՅԹ ու ԱՐԺԷՔ կամ ՈՐԱԿ ստեղծելու վրայ...Բայց քանակական գիտելիքները չեն կրնար երբեք ՄՆՈՒՆԴ մատակարարել ՀՈԳԻՒՆ, որ տակաւ կ'աղքատանայ տեղեկութեանց աղմուկին ու թոհուրոհին մէջ:

.....

Դարի իւելացնոր աղմուկը հոգիներու պատանք է...Հոգին էական կարիքն ունի լռութեան, խաղաղութեան, անդորրի, որպէսզի կարենայ լսել իր սեփական, հարազատ ձայնը, որ խորագոյն Ես-ի ձայնն է, խղճի ներքին ձայնը, որ կը կծկուի, կ'աղճատուի, կ'այլասերի աղմկարար խաժամուծին ու ժխորին մէջ, քսանմէկերորդ դարի իբր գերքաղաքակիրթ, բայց խորքին մէջ մարդ էակի վայրենացման, մեքենայացման, հոգիներու բրտացման ժամանակներուն...



.....

ԱԶՍՏ ԿԱՄՔԸ գերագոյն գանձն է որ շնորհուած է մեզի Արարիչին կողմէ: Ի՛նչ տափակ, միօրինակ եւ մեքենայական պիտի ըլլար մարդ էակին կեանքը, եթէ ան գուրկ ըլլար ԱԶՍՏ ԿԱՄՔԷ...Ազատ ընտրութենէ, նոյնիսկ եթէ միշտ ԲԱՐԻՆ գործեր ան հարկադրաբար: Ի՛նչ արժէք կրնայ ունենալ նոյնիսկ ԲԱՐԻՆ, եթէ պարտադրաբար կատարուի ան, առանց մեր ազատ ընտրութեան: Ճիշդ է որ ազատ ընտրութիւնը կը հնարաւորէ նաեւ ՉԱՐԻ ընտրութիւնը եւ վերջինը գուցէ աւելի հրապուրիչ թուի շատ մը պարագաներուն: Ազատ կամքով Բարին ընտրելը մարտահրաւեր մըն է՝ արդարեւ, որ կ'ենթադրէ յաղթահարել բազում խոչընդոտներ, դժուարութիւններ, գայթակղութիւններ...եւ այդ պայքարի ընթացքն է որ իսկական արժէք կու տայ ԲԱՐԻՆ ձեռքբերման.:

.....

ՄՐՏԻ ՊԱՅԾԱՌՈՒԹԻՒՆԸ արդեօ՞ք բխումն է լաւատես հայեացքի՝ կեանքին ու աշխարհին, նաեւ՝ մաքուր խղճի, որոշապէս, քանզի եթէ անկեղծ եղած ես դուն քեզի եւ բոլորին հանդէպ, եթէ անիրաւ չես եղած այլոց նկատմամբ, եթէ կատարած ես պարտականութիւններդ խղճի մտօք եւ մանաւանդ առանց որեւէ ակնկալութեան, անսակա՛րկ ու անշահախնդի՛ր, յայնժամ ներքին պայծառութիւնը կը շողայ համակ էութենէդ...Աչքերդ մանաւանդ կը մատնեն ներաշխարհդ, կը ցուցնեն հոգիդ, եւ ինքնաբոխ ժպիտը կը ծաղկի դեմքիդ վրայ, արեգակին նման ոսկեշող: Սրտի պայծառութիւնը Արարիչին պարգեն է, անտարակոյս, մաքուր եւ անեղծ հոգիներուն, որպէս գանձ անկողոպտելի:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Կեանքի հրաշքը մենք կ'ըմբռնենք,
Երբ օրն արդէն կ'իրիկնանայ,
Մայրամուտը մեզ կը յուշէ
Անցնող օրը անվերադարձ...

.....

Բառեր չգտայ, բառ յօրինեցի,
Տողեր չգտայ, տողեր հիւսեցի,
Ի՛նչ ալ երկնեցի ու արարեցի
Կաթիլ մըն էր սոսկ հոգւոյս անդունդին...

.....

Մի բուռ հողին մէջ հայրենեաց հերոսներու աճիւնը կայ,
Զգոյշ քալէ, թող չխոցուի սիրտը անոնց տառապահար,
Լռութեան մէջ դուն կը լսես կանչը անոնց հայրենավառ,
Թէեւ ննջեն, դեռ արթուն է ոգին անոնց յաւերժագնայ:

.....

Իմաստութեան բիր-բիր շիթեր հաւաքեցի սխալներէս,
Ոյժ ու կորով՝ զառիվերէն որ ցցուեցաւ միշտ իմ առջեւ,
Ոգի ու կամք՝ պայքարելու յուսալքման անդունդին դէմ
Եւ խիղճ մ'արդար որ կը ցոլայ գայթակղութեանց հոսանքին դէմ:

.....

Երագն է որ թելեր կու տայ թելածելու դէպ' բարձունքներ,



Մի՛ կասեցնէր խոյանքն անոր, որ կը տանի լոյս երկինքներ,
Թէ կասեցնես ու մարմին տաս, ան փշրուի բիրեղի պէս,
Երազն է որ գորշ առօրեան կ'ընծայէ սլացք մը ոգեղէն:

.....

Թէ երազը ջնջես կեանքէդ,
Հեքիաթն անոր ոգեշնչող,
Անհոգի մարդ մը կը դառնաս,
Միս-ոսկորէ շինուած ռոպոթ:

.....

Եւ քանի անգամ թուղթէ շերեփին
Դուն հաւատացիր, ժողովուրդ հայոց,
Հիմա ա՛լ գիտես դաւերն աշխարհի
Ու պիտ'հաւատաս լոկ բռունցքիդ հօր...

.....

Մէկ զիջումը տանի միւսին,
Դեռ աւելի ահաւորին,
Ստրուկը միայն հլու զիջի,
Համակերպի իր շղթային:

.....

Բա՛ւ է, հայեր, պիտ' արթնանք
Մեղկ թմբիրէն մեզի պատած,
Դամոկլեան սուրն է որ սպառնայ
Ջնջել հայր ու Հայաստան:

.....

Պիտի զինուինք զէնք ու զրահով,
Հօր միտքով, ամուր կամքով,
Պետական կուռ մեքենայով,
Միասնական հօր բռունցքով...

.....

Ամբողջ կեանքը երազ մըն է,
Կու գայ, կ'անցնի ասուպի պէս,
Անցնելէն ետք, չի դառնար ետ,
Կը մնայ յուշ անդունդին մէջ:

.....

Ոսկի, արծաթ ու ադամանդ
Պէս-պէս գանձեր շքեղափայլ
Ինչպէ՞ս լեցնեն հոգին դատարկ
Հարստութիւն դառնան իրա՛ւ...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ